

Ա. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆՐԲԱԳԵՂՄ ՈՉԻԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈ-ՈՒՄ



636.3(47.995) 90308

4-29. Миримиттергүйн Н.И.
Криматын нэвтрүүлэхийн
түүхийн чигрэлийн төслийн

1нр. 35к.

636.3 (47.925)

Կ-29

Ա. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՎԱԿԱՆ Հ 1961 թ.

ՆՐԵՎԳԵՂՄ ՈՉԻԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԴ-ՈՒՄ



ՀՕ. 3-08

Հ 1960 թ.

С. К. КАРАПЕТЯН
ПУТИ РАЗВИТИЯ ТОНКОРУННОГО
ОВЦЕВОДСТВА В АРМЯНСКОЙ ССР
(На армянском языке)
Изд. АН Армянской ССР, Ереван, 1951 г.

ՆՐԲԱԳԵԼՄ ՈՉԽԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-ՈՒՄ

Կենդանիներն ու բույսերը, որոնց սովորաբար համարում են բնության արդյունք. իրականում աւխտանիշի արդյունք են, այն էլ ոչ միայն նախորդ տարվա աւխտանիշի. այլ իրենց ժամանակակից ձևերով նաև ձևափոխությունների արդյունք են, որոնք տեղի են ունեցել օտա սերունդների ընթացքում մարդու հսկողության տակ. մարդկային աւխտանիշի միջնորդությամբ:

Կ. Մարգա (Պապիտակ, 1 համ.)

Ոչխարաբուծությունը անասնաբուծության հնագույն ճյուղերից մեկն է. Ոչխարների ժամանակակից ցեղերը երկարատև պատմական էվոլուցիայի արդյունք են, փոփոխությունների արդյունք, որոնք տեղի են ունեցել շատ հազարամյակների ընթացքում, մարդկային աշխատանքի անմիջական ներգործության տակ: Այդ ցեղերի ձևավորման մեջ վճռական դեր է խաղացել ինքը մարդը, այսինքն՝ արհեստական ընտրությունը և նպատակադիր սելեկցիան, գերիշխող ցեղերի ու դասակարգերի շահերի համեմատ:

Ոչխարի ընտելացման պատմությունը գալիս է շատ խորը հնությունից՝ հին Եգիպտոսի դարաշրջանից, այսինքն՝ 6—7 հազարամյակ մեր թվարկությունից առաջ: Ասորական երկարապոչ ոչխարի մասին հիշատակվում է մեր թվարկությունից 1800 տարի առաջ: Բայց նյութական կուլտուրայի պատմության հուշարձունների, նրբագեղմ ոչխարները գոյություն են ունեցել մեր դարաշրջանից 1000—1300 տարի առաջ: Մի շարք փաստեր և հետազոտություններ մեզ հիմք են տալիս պնդելու, որ Եգիպտոսի, Բաբելոնի, Ասորիքի, Փոքր Ասիայի հետ մեկտեղ, կուլտուրական ոչխարաբուծության հնագույն օջախներից մեկն էլ հանդիսացել է Անդրկովկասը, հատկապես Սև ծովի ափերը և Հայկական բարձրավանդակը: Ն. Պ. Կուլեշովը նշում է. «Միանգամայն հավանական է, որ երկարապոչ, ավելի կուլտուրա-


կան ոչխարը ստեղծված է Ասորիքում, Հայաստանում և Պարսկաստանում, որտեղից և նա արդեն տարածվել է Աֆրիկայում և Եվրոպայում»: Նա նշում է նաև, որ «Ասորական ոչխարի ենթացեղերը, որոնք բնորոշվում են նուրբ և սպիտակ բրդով, տարածվել են ամբողջ Փոքր Ասիայում, Հունաստանում, Իտալիայում և Իսպանիայում»: Համարյա անկասկած, այդ ենթացեղերից են ծագում ժամանակակից ցիդայան ոչխարները և մերինոսները»:¹

Ոչխարաբուծության, որպես հնագույն կուլտուրայի մասին Հայաստանի տերիտորիայի վրա, հարուստ նյութ է տալիս նաև Հայաստանի պատմության վերաբերյալ գրականությունը (Манандյան Ա. Ա.—Օ торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, Госиздат, 1930 թ., Հափանցյան Գր.—Ռւարտուի պատմությունը, Հայկական ՍՍՌ Պետական համալսարանի աշխատություններ, հատոր 14-րդ, 1940 թ. և ուրիշներ):

Ստեփանավան քաղաքում (Հայկական ՍՍՌ) պահպանվել են երկու չափազանց հետաքրքիր հուշարձաններ՝ բազալտ քարի վրա, համարյա բնական մեծությամբ քանդակված է տիպիկ նրբագեղմ խոյերի պատկերը, նիհար պոչով և պտուտակածե ոյորված եղջյուրներով (տես նկ. 1 և 2): Այս բոլոր տվյալները հիմք են տալիս ենթադրելու, որ Հայաստանը կուլտուրական, իսկ հավանական է, որ նաև նրբագեղմ ոչխարաբուծության առաջացման և տարածման հին ակունքներից մեկն է եղել, թեպետ հետագա շրջաններում, շնորհիվ ստեղծված պատմական և սոցիալ-տնտեսական պայմանների, բացարձակապես գերակշռում են կոստարուրդ ճարպապոչ ցեղերը, ընդհուպ մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը:

Համաշխարհային ոչխարաբուծության զարգացման ամբողջ պատմությունը ցույց է տալիս, որ անառնաբուծության այդ ճյուղի ամենաշահավետ և առաջադեմ ուղղությունը, գա՞ նրբագեղմ ոչխարաբուծությունն է, իսկ Հայկական ՍՍՌ-ում գոյություն ունեցող ոչխարների տեղական ցեղերն ու ենթացեղերը բնորոշվում են որպես մսակաթնաբրդային ուղղության ցեղեր: Ոչխարաբուծության գլխավոր պրոդուկտը՝ բուրդը, տեղական ոչխարների մոտ կոպիտ է: Այդ ցածը արժեք ունեցող բրդի տարեկան ելույթը մեկ ոչխարից կազմում է 1,2—1,4

¹ Г. Н. Кулешов, Грубощерстное овцеводство, Москва. 1925 г., стр. 8.



Նկ. 1. Հայկական ՍՍՌ Ստեփանավան քաղաքում հայտնաբերված նրբագեղմ մերինոս տիպի ոչխարի քանդակը բազալտ քարի վրա։ Երկարությունը 130 սմ, պարագիծը 200 սմ, քաշը մոտ 700 կգ։



Նկ. 2. Հայկական ՍՍՌ Ստեփանավան քաղաքում հայտնաբերված նրբագեղմ մերինոս տիպի ոչխարի քանդակը բազալտ քարի վրա։ Երկարությունը 150 սմ, պարագիծը 180 սմ, քաշը մոտ 1 տոննա։

Կիլոդրամ: Կոպիտ բուրդը բոլորովին չի բավարարում աճող բրդամշակման արդյունաբերության պահանջներին, մանավանդ մանրասանը (կամվոլ) արտադրության, որը վերջին տարիներին լայն զարգացում է ստացել Սովետական Միության, նույնպես և Հայկական ՍՍՌ-ում և այլ ռեսպուբլիկաներում ու մարզերում:

Բավական է ասել, որ ներկայումս Հայկական ՍՍՌ բրդամշակման արդյունաբերության նուրբ և կիսանուրբ բրդի պահանջը, ի հաշիվ սեփական արտադրության (կոլխոզների, սովխոզների և այլ սեկտորների պետական պարտավորությունները), բավարարվում է ընդամենը 2—3 տոկոսով, որը բացատրվում է նրբագեղմ և կիսանրբագեղմ ոչխարների աննշան տեսակարար կշռով ընդհանուր հոտի մեջ:

Նրբագեղմ ոչխարաբուծության զարգացմանը պարտիան և կառավարությունը, սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերից, մեծ ժողովրդա-տնտեսական նշանակություն էին տալիս: Դեռ 1918 թ. հուլիսի 13-ին հրատարակվում է Սովետական կառավարության գեկրետը «Ճեղական անասնաբուծության մասին»¹, իսկ 1919 թ. հոկտեմբերի 3-ին, Վ. Ի. Լենինի ստորագրությամբ հատուկ դեկրետ է հրատարակվում «Նրբագեղմ (մերինոսային) ոչխարաբուծության պահպանման ու զարգացման մասին», որը պահանջում է նախկին մասնավոր սեփականատիրական հոտերից մնացած նրբագեղմ ոչխարների ամրող գլխաքանակն անմիջապես հանձնել համապատասխան պետական ցեղական բուծարաններին: Դեկրետը առանձին քաղաքացիներին և կազմակերպություններին զգուշացնում է, որ բուծարաններից մերինոսային ոչխարների ամեն մի հավատակումը պատժվում .է ռեսլուցիոն օրենքների ամենայն խրստությամբ:²

Քաղաքացիական պատերազմի տարիներին անմսաս մնացած նրբագեղմ ոչխարների այդ մնացորդների բազայի վրա ստեղծվում են առաջին պետական ոչխարաբուծական տնտեսությունները՝ դրանց թվում՝ Ստավրոպոլի Երկրամասի «Բոլշևիկ» և «Սովետական գեղմ» սովխոզները, որոնք հայտնի են ոչ միայն Սովետական Միության մեջ, այլև նրա սահմաններից շատ հեռու: Այդ

¹ Собр. зак. 1918 г. № 52, стр. 58б.

² Известия Всероссийского Центрального Исполнительного Комитета Советов № 221 от 4 октября 1919 г.

սովխոզներում սովետական գոռակիսնիկների կողմից ստեղծվել են ոչխարների հռչակավոր հայրենական նրբագեղմ ցեղերը՝ «Կովկասյանը», «Ստավրոպոլյանը» և Կովկասյան մերինոսը (տես նկ. 3, 4, 5.)

Երեսունից ավելի տարիների ընթացքում պարտիայի և կառավարության կողմից սիստեմատիկաբար և հետևողականորեն իրականացվում են մի ամբողջ շարք միջոցառումներ նրբագեղմ ոչխարաբուծության հետագա զարգացման, սովխոզների, պետական բուծարանների և կոլխոզային տոհմային ֆերմաների լայն ցանցի կազմակերպման, ինչպես նաև նրբագեղմ և կիսանրբագեղմ ոչխարների հայրենական ցեղերի ստեղծման ուղղությամբ։ Այդպիսի ցեղերի քանակը ներկայումս տասից ավելի է։

Հայրենական նրբագեղմ ոչխարաբուծության զարգացման գործում խոշոր նշանակություն են ունեցել՝ ՀամԿ(բ)Պ 1934 թ. հուլիսյան պլենումի որոշումը տոհմական գործի դրվածքի մասին և ՍՍՌՄ ժողկոմխորհի 1936 թ. մարտի 7-ի որոշումը նրբագեղմ ոչխարաբուծության զարգացման պլանի մասին։ Այդ որոշումներից հետո զգալիորեն բարձրացավ տեղական կոպտարուրդ ոչխարները նրբագեղմ խոյերի հետ տրամախաչելու տեմպը։

1932 թ. նրբագեղմ խոյերի հետ տրամախաչվել են մոտ 1 միլիոն կոպտարուրդ մայր ոչխարներ, 1933 թ.՝ 1,6 միլիոն, 1934 թ.՝ 2,3 միլիոն, իսկ 1935 թ.՝ 3,6 միլիոն։

Հետագա տարիներին տրամախաչման տեմպերն էլ ավելի ուժեղացան։ 1936 թ. նրբագեղմ խոյերով ծածկվել է մինչև 11 միլիոն մայր, իսկ 1939 թ. այդ թիվը հասավ 17,5 միլիոնի։

Մասսայական տրամախաչման առաջին արդյունքները հիմք տվեցին ընդունելու այդ մեթոդը, որպես կոպտարուրդ ոչխարների որակական բարելավման ամենաարագ և էֆեկտավոր մեթոդ։ Այդ միջոցառումների շնորհիվ արդեն 1940 թ. նրբագեղմ ոչխարների և նրանց խառնուրդների գլխաքանակը ՍՍՌՄ-ում հասավ 22,1 միլիոնի։

Միայն 4 տարվա ընթացքում՝ 1935 թ. մինչև 1939 թ. նրբագեղմ և կիսանրբագեղմ ոչխարների հոտը ՍՍՌՄ-ում ավելացավ ավելի քան երեք անգամ։ Հոտի այդպիսի որակական փոփոխությունը հնարավորություն տվեց մեծ չափով բարձրացնելու նուրբ և կիսանուրբ բրդի տեսակարար կշիռը բրդի ընդհանուր համախառն ելույթում։ Եթե 1924 թ. նուրբ

բուրդը կազմում էր ստացվող բրդի ընդամենը 9,2 տոկոսը, ապա 1935 թ. ինուրը և կիսանուրը բրդի տեսակարար կշիռը բարձրացավ մինչև 30 %, իսկ 1940 թ. նա արդեն կազմում էր ամբողջ հլույթի 64 %-ը:




Նկ. 3. Կովկասյան ցեղի խոյ:

Հայրենական պատերազմի տարիներին նրբագեղմ ոչխառաբուծությունը խիստ տուժեց: 1945 թ. նա կազմում էր նախապատերազմյան մակարդակի մոտ 60% -ը: Սակայն հետպատերազմյան հնգամյակի և հանրային կոլխոզային ու սովխոզային անասնապահության զարգացման եռամյա պլանի հաջող կատարման հետևանքով, ներկայումս զգալիորեն գերազանցված է ոչխարների գլխաքանակի նախապատերազմյան մակարդակը:

Լուրջ հաջողություններ են ձեռք բերվել նաև նրբագեղմ ոչխառաբուծության վերականգնման ուղղությամբ: 1948 թ. մթերված խառնածին ոչխարների բրդի ընդհանուր քանակից 1-ին դասին պատկանում էր 20 %, 2-րդ դասին՝ 21,2 %: Այլ խոսքով, խառնածին բրդի 41,2 %-ն արդեն իրենից ներկայացնում էր միատարր, կիսանուրը բուրդ:


Կոպտաբուրդ ոչխարների մասսայական տրամախաչում անցկացնելու տնտեսական նպատակահարմարության գիտական հիմնավորման գործում բացառիկ ակտիվ գեր խաղացին առաջադեմ սովորական գիտնական զոռականությունները, և մասնավորապես ակադեմիկոս Մ. Ֆ. Իվանովը, որի արժանիքները ՍՍՌՄ-ում



Նկ. 4. Ստավրոպոլյան ցեղի խոյ:

նրբագեղմ ոչխարաբուծության զարգացման գործում գժվար է գերադնահատել: Պետք է նշել, որ Մ. Ֆ. Իվանովը կոպտաբուրդ ոչխարների բնիկ ցեղերի մեծ գիտակն էր և կրքոտ գնահատողներից մեկը: Բայց արագ ըմբռնելով կոպտաբուրդ ոչխարները նրբագեղմ ցեղերի հետ տրամախաչելու պետական կարևորությունը և տնտեսական արդյունավետությունը, նա, ոչխարների մասսայական տրամախաչման, կամ, ինչպես նա այն ժամանակ անվանում էր, հիբրիդիզացիա կատարելու ամուր ու անսասան դիրք բռնեց, պընդելով, որ «... կոպտաբուրդ ոչխարների գլխավոր մասսան հնարավոր է բարելավել միայն հիբրիդացման ճանապարհով»: Ակադեմիկոս Իվանովը իր բեղմնավոր գիտական գործունեությունը, նրբագեղմ ոչխարաբուծությունը զարգացնելու վերաբերյալ կառավարական միջոցառումների գործնական իրականացման հետ ստեղծագործեն զուգակցելու հիանալի օրինակ է ցույց տալիս:

Նա համաշխարհային ոչխարաբուծության պատմության մեջ առաջին անգամ գիտականորեն հիմնավորեց և գործնականորեն իրականացրեց ոչխարների նրբագեղմ ցեղեր և գյուղատնտեսական անասունների այլ տեսակներ ստեղծելու նոր մեթոդ, միջցեղային տրամախաչման ընտրության, զույգընտրության միջոցով և խառնածին կենդանիների նպատակադիր գաստիարակման ճանապարհով։ Նա հիանալի գիտեր, թե արտաքին միջավայրը ինչպիսի խոշոր դեր է խաղում կենդանիների նոր ցեղերի ձևավորման գործում և մեծ վարպետությամբ այդ սկզբունքը կիրառում էր այդ ուղղությամբ տարվող իր աշխատանքներում։



Նկ. 5. Սովետական մերինոս ցեղի խոյ։

«Հատկանիշները չեն փոփոխվում, քանի դեռ չեն փոփոխվում այն արտաքին պայմանները, որոնց մեջ կենդանուն վիճակված է ապրել»—գրում է ակադեմիկոս Իվանովը։ «Պայմանների փոփոխման հետ մեկտեղ կարող են փոխվել և հատկանիշները։ Այսպիսով, ցեղը ինչ որ կայուն բան չէ։ Փոփոխելով կյանքի պայմանները, մենք կարող ենք փոփոխել և ցեղերը»։¹

¹ М. Ф. Иванов, Соч., т. II, стр. 150.

Բարձր է գնահատում միջցեղային տրամախաչման նշանակությունը նաև ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն։ Լենինի անվան գյուղատնտեսական գիտությունների Համամիութենական ակադեմիայի օգոստոսյան սեսիայում տված իր զեկուցման մեջ 1948 թ. նա ասաց. «Մետիզացիան տվյալ կենդանիների ցեղի-սերնդի փոփոխման արմատական և արագ եղանակ է»։

Միջցեղային տրամախաչման արագ տեմպերին մեծ չափով նպաստել է արհեստական սերմնավորման լայն կիրառումը, որն իր հերթին հնարավորություն է տալիս մաքսիմալ էֆեկտիվությամբ օգտագործել լավագույն, բարձր արդյունավետություն ունեցող արտադրող խոյերին։ Այս մեթոդով երկրում ամեն տարի սերմնավորվում է մոտ 20 միլիոն ոչխար։ Միաժամանակ միջցեղային տրամախաչումը լայն բիոլոգիական բազա է ստեղծում ընտրության և խորացած տոհմային աշխատանք կատարելու համար։

ՏԵՂԱԿԱՆ ԿՈՊՏԱԲՈՒՐԴԻ ՈՉԽԱՐՆԵՐԸ ՆՐԲԱԳԵՂՄ ՑԵՂԵՐԻ ՀԵՏ ՏՐԱՄԱԽԱՉԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-ՈՒՄ

Տեղական կոպտաբուրդ ոչխարները նրբագեղմ խոյերի հետ տրամախաչելը հայկական ՍՍՌ-ում սկսվել է դեռ 1936 թ. և արդեն 1941 թ. կոլխոզներում 170 հազար խառնածին ոչխարներ կային, ճիշտ է, դրանք հիմնականում առաջին սերնդի խառնածիններ էին։ Սակայն հետագա տարիներին, մասսամբ պատերազմական ժամանակվա պայմանների պատճառով, ինչպես նաև հայաստանի գիտա-հետազոտական հիմնարկներում աշխատող որոշ մասնագետների սխալ դիրքավորման հետևանքով առաջին սերնդի խառնածինների և տեղական կոպտաբուրդ խոյերի միջև, իրենից ներկայացնում էր համարյացառապես ցածր սերնդի ցածրորակ կենդանիներ։

Կոլխոզներում ու սովխոզներում նրբագեղմ ոչխարաբուծության վերականգնման ու զարգացման հարցին մեծ ուշադրություն դարձվեց ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման հետպատերազմյան հնգամյա պլանում (1946—1950 թթ.): Այդ հարցին մեծ ուշադրություն նվիրեց նաև Համեր (բ)Պ փետրվարյան պլենումը (1947 թ.), որը սովետական

ու պարտիական օրգաններից, ՍՍՌՄ Գյուղատնտեսության մինիստրությունից և Սովխոզների մինիստրությունից պահանջեց հատուկ ուշադրություն դարձնել նրբագեղմ ոչխարարուծության զարգացման վրա. Նրբագեղմ ոչխարարուծության զարգացման գործում խոշոր դեր խաղաց կառավարության որոշումը հանրային, կոլխոզային ու սովխոզային մթերատու անասնաբուծության զարգացման եռամյա պլանի մասին (1949—1951 թթ.): Վերջապես, անասնաբուծության և մասնավորապես ոչխարարուծության զարգացման գործում մեծ խթան հանդիսացավ ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության 1947 թ. սեպտեմբերի 16-ի Հրամանագիրը անասնաբուծության մեջ բարձր ցուցանիշներ ձեռք բերելու համար, Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կոչում շնորհելու և շքանշաններով ու մեդալներով պարզեատր-րելու մասին:

Անցած 5—6 տարիների ընթացքում նրբագեղմ զտացեղ և խառնածին ոչխարների գլխաքանակը ռեսպուբլիկայի կոլխոզներում որոշ չափով աճեց և առ մեկը հունվարի 1951 թ դրությամբ հասավ 260 հազարի: Սակայն, գլխաքանակի որակական կազմի անալիզը ցույց է տալիս, որ 260 հազար գլխից նրբագեղմերը կազմում են ընդամենը 2165 գլուխ (դա հիմնականում զտարյուն արտադրող-խոյերն են), կիսանրբագեղմերը՝ մոտ 68 հազար, իսկ մնացածները՝ 190 հազար գլուխ, այսինքն՝ ամբողջ խառնածին գլխաքանակի $\frac{3}{4}$ -ը կիսակոպտարուրդ խառնածիններ են:

Դա հետեւանք է այն բանի, որ ռեսպուբլիկայի գյուղատընտեսական օրգանները և կոլխոզների ղեկավարները հետեւողականություն չեն ցուցաբերել առաջին սերնդից հետո տրամախաչումը շարունակելու գործում:

Հատկապես վատ են զբաղվում տեղերում հոտի որակական բարելավման հարցերով՝ մանրակրկիտ բոնիտացման, ոչ պիտանի անասունների խոտանման, խնամքի պայմանների բարելավման և ճիշտ կերակրման միջոցով:

Պետք է նշել սակայն, որ նույնիսկ այս թերությունների առկայության պայմաններում տրամախաչման հետեւանքով Հայաստանի կոլխոզներում, խառնածին ոչխարների բուրդը տեղական ցեղերի հետ համեմատած համարյա երկու անգամ ավելացել է:

Ոչխարաբուծության գծով աշխատողների մի մասը տեղե-

բում և, գժրախտաբար, նույնիսկ որոշ մասնագետներ ու գիտական աշխատողներ միջցեղային խաչաձևման պրոցեսը, որպես ոչխարների բրդային հատկությունների բարելավման ամենից ավելի արտգ միջոց, մեխանիկորեն են ըմբռնում, ելնելով գեներացիայի աստիճանից, մոռանալով, որ այդ մեթոդի կիրառումից իսկական արդյունք է ստացվում միայն այն դեպքում, երբ խառնածին սերունդների համար կերակրման, պահպանման և նպատակադիր դաստիարակման համապատասխան պայմաններ են ստեղծվում, երբ ֆերմաներում սիստեմատիկ աշխատանք է տարվում լավագույնների ընտրության և անպետք ոչխարների խոտանման ուղղությամբ։ Միայն զտարյունությունը, այսինքն՝ գեներացիայի բարձրացումը առանց կերակրման, խնամքի ու պահպանման պատշաճ պայմաններ ստեղծելու, չի կարող սպասվող արդյունքը տալ Դրանով պետք է բացատրել, որ մեր ռեսպուբլիկայի շատ կոլխոզներում առաջին սերնդի խառնուրդների զգալի մասը դեռ շարունակում է կոպիտ բուրդ տալ, մի փոքր մասն էլ կիսակոպիտ բուրդ է տալիս, և միայն աննշան մասը 5—6 % առաջին և երկրորդ դասի 56—58 որակի կիսանուրբ բուրդ է տալիս։

Կերակրման ու պահպանման վատ պայմանների և վատ կազմակերպված սելեկցիոն աշխատանքի դեպքում, նույնիսկ երկրորդ սերնդի խառնածինների զգալի մասը շարունակում է տալ ոչ միատարր, 3-րդ և 4-րդ դասի կիսակոպիտ բուրդ, իսկ նուրբ բուրդ տվող ոչխարների տեսակարար կշիռը չափազանց ցածը է լինում։ Հնդհակառակը, լավ դրված զոռտեխնիկան աշխատանքի դեպքում ֆերմաներում, որտեղ կազմակերպված է ռացիոնալ կերակրում և լավ պահպանում, առաջին սերնդի խառնուրդների որոշ մասը միատարր կիսանուրբ բուրդ է տալիս։

Հուկասյանի ռայոնի Ենիյոլ կոլխոզում, Ստեփանավանի ռայոնի Սվերդլովի անվան կոլխոզում, Նոր Բայազետի ռայոնի Նորադուզ և Սարուխան, Թալինի ռայոնի Շահումյանի անվան, Իջևանի ռայոնի Կույբիշև գյուղի, Սպիտակի ռայոնի Պարնի գյուղի կոլխոզներում առաջին սերնդի խառնածինների մեջ քիչ չեն առաջին և երկրորդ դասի կիսանուրբ բուրդ ունեցող կենդանիները։

Հետաքրքիր արդյունքներ են ստացվել 1951 թ. առաջին սերնդի խառնուրդների ծնից։ Ախուրյանի ռայոնի Սարիար գյուղի կոլխոզում 698 գառներից 78-ը կամ 11,2 %-ը միատարր կիսանուրբ բուրդ տվին։ Նույն ռայոնի Զաջուռ գյուղի

կոլխոզում 362 գլուխ առաջին սերնդի խառնածին գառներից, 46-ը կամ 12,4%-ը միատարր կիսանուրբ բուրդ տվին, իսկ Ստեփանավանի ռայոնի Պուշկինո գյուղի կոլխոզում 293 գառներից 40-ը կամ 13,6%-ը կիսանուրբ բուրդ տվին:

Ընդհանուր առմամբ վերցրած հետազոտված չորս կոլխոզներում առաջին սերնդի այն խառնածին գառները, որոնք կիսանուրբ միատարր բուրդ ունեն, կազմում են գառների ամբողջ հոտի 11,2%-ը, այսինքն՝ կրկնակի անգամ ավելի, քան ուսպուրլիկայի մյուս կոլխոզներում:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում կիսանրբագեղմ ոչխարների նոր ցեղային խումբը, որ ձևավորվում է Ալագյաղի սովխոզում։ Այդ ցեղային խմբի հետ աշխատող մտանագետների մտահղացմամբ (պրոֆ. Ա. Ռուխկյան և ուրիշներ), տեղական ոչխարների կոպտաբուրդ բալրաս ցեղի մայրերը ռամբուլյե տիպի նրբագեղմ խոյերի հետ տրամախաչելով և առաջին սերնդի խառնածին խոյերով ծածկելով բալրաս ցեղի մայրերը, պետք է ստանային նոր տիպի ոչխարներ կիսապահությունում տեղականների դժակը։

Բնականորեն նրանք հնարավոր չեին համարում այդ կոմբինացիայի գեղքում ստանալ կիսանուրբ բուրդ ունեցող կենդանիներ։ Սակայն վերջերս կատարված հետազոտությունը ցույց տվեց, որ սովխոզում արդեն առաջացել է կիսանուրբ բուրդ ունեցող նոր ցեղային խումբ, թվով 2665 գլուխ։ Այդ խմբի սելեկցիոն հոտում եղած ոչխարների 80 % ը ունի միատարր, 50—58 որակի կիսանուրբ բուրդ, որոնք միաժամանակ պահպանել են ճարպային պոչ։ Այդ ոչխարների միայն գարնան բըդի խուզը մեկ գլխից միջինը կազմում է 2,6—2,8 կիլոգրամ, իսկ լավագույն մայրերը մինչև 4,5 կգ բուրդ են տալիս։

Այս փաստերը հիմք են տալիս կասկածելու այն բանում, որ նոր ցեղային խմբի գոյացած գլխաքանակը արդյունք է առաջին սերնդի խառնածին խոյերը կոպտաբուրդ մայրերի հետ հակադարձ տրամախաչելու (կամ այլ կոմբինացիաների, որոնց հետևանքով, սակայն, ստացված կենդանիները իրենց զտարյունությամբ զիջում են առաջին սերնդի խառնածիններին), քանի որ առաջին սերնդից էլ պակաս զտարյունություն ունեցող կենդանիները չեին կարող կիսանուրբ բըդի այդպիսի բարձր տոկոս տալ, որովհետև չայաստանի պայմաններում կատարված բազմաթիվ հետազոտությունները ցույց են տալիս,

որ նույնիսկ կիսարյուն կենդանիները, այսինքն՝ 1-ին և 2-րդ դասի միատարր կիսանուրբ բուրդ ունեցող առաջին սերնդի խառնածինները չեն գերազանցում տվյալ սերնդի գլխաքանակի 10—12%-ից, իսկ մնացած 88—90% կիսակոպիտ և կոպիտ բուրդ է տալիս։ Այդ պատճառով էլ միանգամայն անհավանական է այն պնդումը, որ առաջին սերնդից էլ պակաս զտարյունություն ունեցող խառնուրդային ոչխարները 80—90% կիսանուրբ բուրդ ունենային՝ այլ խոսքով 10—12 անգամ ավելի, քան կրկնակի բարձր ցեղայնություն ունեցող խառնածինները։ Ամենայն հավանականությամբ այդ տնտեսությունում տեղի է ունեցել տրամախաչում մինչև երկրորդ և երրորդ սերունդը, ինչպես նաև ընտրություն՝ այդ խառնածինների մեջ։ Կարող է բնականորեն հարց ծագել, իսկ ինչ են ասում այդ մասին Ալագյազի սովխոզում եղած տոհմային աշխատանքի հաշվառման նյութերը։ Բանն էլ հենց այն է, որ տոհմային աշխատանքի ճիշտ հաշվառումը սովխոզում բացակայում է։ Մյուս կողմից, ուշադրության արժանի է սովխոզի ավագ զոռտեխնիկ ընկ. Ս. Իգիթխանյանի հաղորդումն այն մասին, որ 1942—43 թվերին սովխոզում արդեն կային մեծ քանակությամբ երկրորդ, երրորդ և անգամ չորրորդ սերնդի խառնածիններ։

Նոր ցեղային խմբի ոչխարների մոտ ճարպային պոչի առկայության վկայակոչումը որպես առաջին սերնդի խառնածինների և կոպտարուրդ ցեղի հակադարձ տրամախաչման ապացույց, նույնպես անհիմն է, որովհետև Վրացական ՍՍՌ-ում դիտական աշխատող Ա. Գ. Նատրաշվիլին արդեն ստացել է ոչխարի նոր ցեղ կիսանուրբ բրդով և նորմալ ճարպային պոչով։ Թուշի կոպտարուրդ ոչխարները նրբագեղմախոյերի, գերազանցապես պըեկոս ցեղի հետ տրամախաչելու և հետագայում առաջին ու երկրորդ սերնդի խառնածիններն իր մեջ բուծելու միջոցով, առանց որևէ հակադարձ տրամախաչման։ Հարկ է նշել, որ այդ ցեղի նախահայրը, երկրորդ սերնդի խառնածին խոյը՝ պապաշառն, ունեցել է նորմալ մեծության գմակ, ինչպես թուշի ոչխարները, և միատարր կիսանուրբ բուրդ։

Այսպիսով, դմակի առկայությունը Ալագյազի սովխոզի խառնածին ոչխարների մոտ չի կարող հակադարձ տրամախաչման ապացույց հանդիսանալ։

Նոր ցեղային խմբի բրդային հատկությունների վերաբերյալ բերված տվյալները ցույց են տալիս, որ կիսանուրբ բուրդ

ստանալու համար պետք է առաջին և հատկապես երկրորդ սերնդի խառնածինների մեջ խիստ ընտրություն կատարել և նրանց համար կերակրման ու պահելու լավագույն պայմաններ ստեղծել: Կարելի է անվիճելի համարել, որ առաջին և հատկապես երկրորդ սերնդի խառնածինները իրենց մեջ բուծելով, կիրառելով ստեղծագործական ընտրություն, ինչպես նաև նպատակադիր դաստիարակություն, հնարավոր է համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ոչխարների նոր ցեղեր ստեղծել միատարր կիսանուրբ բրդով, առանց որևէ հնարքների ու հակադարձ տրամախաչումների:

Ըստ Բ. Ն. Ֆիլիպովի և Ա. Վ. Լյուբավսկու տվյալների,¹ առաջին սերնդի խառնածին ոչխարների միայն 5,95%-ն է 1-ին դասի կիսանուրբ բուրդ տալիս, իսկ երկրորդ սերնդի խառնածին կենդանիների 89,5 տոկոսն է 1-ին և 2-րդ դասի կիսանուրբ բուրդ տալիս: 1947 թվականի բոնիտացման տվյալներով նոր վրացական կիսանուրբ ոչխարների ցեղի գառների 61%-ը 50, 56, 58 և 60 որակի կիսանուրբ բուրդ ունեին:

Սակայն խառնածիններից նուրբ բուրդ ստանալու համար ոչխարաբուծական ապրանքային ֆերմաներում տրամախաչումը պետք է շարունակել մինիմում մինչև երրորդ սերունդը, կիրառելով ինչպես վերափոխական, այնպես էլ վերարտադրական տրամախաչման մեթոդները: Իսկ տոհմական տնտեսություններում տրամախաչումը գուցե թե հարկ լինի շարունակել նույնիսկ մինչև 4—5 սերունդը:

Միջեղային տրամախաչման հարուստ փորձը Սովետական Միության մեջ ցույց է տալիս, որ երկրորդ սերնդի խառնածինների մոտ բուրդը մոտենում է միատարրին (մոտ 30% 1-ին դասի, 60% 2-րդ դասի և միայն 10% 3-րդ դասի և ոչ ավել 1% 4-րդ դասի): Երրորդ սերնդի խառնածինների բուրդը համարյա լիովին միատարր է դառնում՝ մոտ 60% 1-ին դասի, 33% 2-րդ դասի և 7—8% 3-րդ դասի: 4-րդ դասի բուրդը բոլորովին բացակայում է, ընդ որում բըդի մոտ 53%-ը պատկանում է 60, 64 և 70 որակին, իսկ մնացածը՝ 58—56 որակին: Ինչ վերաբերում է չորրորդ սերնդի խառնածիններին, ապա, ըստ բըդի որակի, նրանք հաճախ գերազանցում են նույնիսկ զտարյուն նրբագեղմ ոչխարներին: Չորրորդ սերնդի ոչխարների զգալի մասը 70 որակի բուրդ է

¹ Б. Н. Филиппов и А. В. Любавский, Племенное дело в тонкорунном овцеводстве, Сельхозгиз, 1951 г., стр. 135 и 319.

տալիս. Այստեղից պարզ է, որ այն ռայոնները՝
որոնք պետական առաջադրանք են ստացել՝ դար-
դացնել նըրագեղմ ոչխարարություն, չեն կա-
րող առաջին կամ երկրորդ սերնդի վրա տրամա-
խաչումը դադարեցնել, ինչպես խորհուրդ են տա-
լիս որոշ մասնագետներ, որովհետեւ այդ դեպքում
խառնածինները նուրբ բուրդ չեն ունենաւ: Լավա-
գույն դեպքում առաջին սերնդի խառնածինների միայն 3—4%-ը,
իսկ երկրորդ սերնդի խառնածինների ոչ ավելի 13—14%-ը կա-
րող է տալ նուրբ բուրդ, այն էլ 60 որակից ոչ բարձր:

Իսկ ինչպես կատարել պետական առաջադրանքը, եթե առա-
ջին և երկրորդ սերնդից հետո տրամախաչումը չշարունակվի. Կարող
են ասել՝ ընտրության միջոցով երկրորդ սերնդի խառնածինների
մեջ և հետագայում իր մեջ բուծելու ճանապարհով: Բայց բազմա-
մյա փորձը և միշտ հետազոտություններ ցույց են տալիս, որ
առաջին սերնդի խառնածինների 3—4%-ից ավելին չէ, որ նուրբ
բուրդ է տալիս, այն էլ 60 որակից ոչ բարձր, իսկ երկ-
րորդ սերնդի խառնածինների 13—14%-ից ոչ ավելին է տալիս
նուրբ բուրդ, ըստ որում հիմնականում 60 որակի: Այսպիսով,
64—70 որակի ընտիր նուրբ բուրդ ստանալու համար, էլ չենք խո-
սում 74 որակի բրդի մասին, տրամախաչումը մինիմում երրորդ
սերնդին հասցնելը ուղղակի անխուսափելի է: Կարող է լինել և այլ
առաջարկություն, այս կամ այն ռայոնը ներմուծել ոչխարների
արդեն պատրաստի նըրագեղմ ցեղեր: Բայց նախ և առաջ հան-
րահայտ է, որ դրսից ներմուծած կենդանիները շատ ավելի
դժվարությամբ են հարմարվում տեղական նոր պայմաններին,
ավելի են ենթակա զանազան հիմնդությունների, և երկրորդ
դաշտ տարիներով կհետաձգի երկրում նըրագեղմ ոչխարա-
բուծության գլխաքանակի վերաբերությունը:

Այդ պատճառով էլ նոր ռայոններում նըրագեղմ ոչ-
խարաբուծություն ստեղծելու ամենառեալ ու-
ղին պետք է համարել նըրագեղմ ցեղերի տրամա-
խաչումը կոպտաբուրդ ոչխարների հետ, մինիմում
մինչև երրորդ սերունդը, իսկ որտեղ պայման-
ները բարենպատ են, նույնիսկ մինչև չորրորդ
սերունդը: Անվիճելի պետք է համարել: Որ բարձր
սերունդների խառնածինները շատ ավելի լավ
են հարմարված լինում տեղական պայմաններին,
քան բերովի նըրագեղմ ոչխարները: Դա բխում է

Միշուրինյան բիոլոգիայի տարրական հիմունքներից և ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոյի տեսությունից խառնածին կենդանիների ավելի ըարձր կենսունակության վերաբերյալ։ Այդ մասին համոզիչ կերպով խոսում է նաև ՍՍՌՄ-ում սովետական նրբագեղմ ոչխարարության ստեղծման ամբողջ փորձը։

Այս կապակցությամբ անհրաժեշտ է համառոտակիորեն քննել տրամախաչման մեթոդների հարցը։

Երբ հարց է դրվում կոպտաբուրդ ոչխարների տրամախաչումը նրբագեղմերի հետ (առաջին և մանավանդ երկրորդ սերնդից հետո) շարունակելու մասին, ապա որոշ մասնագետներ, որոնք դեմ են տրամախաչման շարունակմանը երկրորդ սերնդից հետո, իրենց առարկությունները հիմնավորում են նրանով, որ դա իրրթե կը երի նրբագեղմ ցեղերի կողմից կոպտաբուրդ ցեղերի հատկությունների կլանմանը, ընդ որում արժեքավոր հատկությունների տակ հասկանալով հիմնականում նրանց հարմարվածությունը տեղական պայմաններին։

Պետք է ասել, որ այդ կարգի առարկություններ առաջադրում է, գժրախտաբար, գիտական աշխատողների ոչ փոքր մասը։ Բայց տեղական կոպտաբուրդ ոչխարներին այդպիսի բարձր պատիվ տալով հանդերձ, նրանք անպատճառ են թողնում այն կարեռագույն հարցը, թե հապա ի՞նչ միջոցով կատարել պետական առաջադրանքը նրբագեղմ ոչխարաբուծության զարգացման և տվյալ մարզի կամ ոեսպուրլիկայի համար սահմանված քանակությամբ նուրբ բուրդ մթերելու մասին։

Այդ հարցի դրումը ակտուալ նշանակություն ունի Սովետական Միության մարզերի ու ոեսպուրլիկաների ճնշող մեծամասնության համար, որովհետեւ կառավարության վերջին որոշմամբ՝ «Խոշոր եղջերավոր անասունների», խոզերի ու ոչխարների ցեղային ռայոնացման պլանի և այդ պլանը կատարելու միջոցառումների մասին», համարյա բոլոր մարզերն ու ոեսպուրլիկաները, բացառությամբ մի քանիսի, որոնք մուշտակային և մորթատու ոչխարաբուծության ուղղություն ունեն, մտցված են նրբագեղմ և կիսանրբագեղմ ոչխարաբուծության զոնայի մեջ, և պետական առաջադրանք ունեն նուրբ բուրդ մթերելու վերաբերյալ։ Այդ նույն որոշմամբ յուրաքանչյուր մարզին և ոեսպուրլիկային՝ բուծման համար նրբագեղմ ոչխարների որոշակի ցեղեր են հանձնարարվում։ Միանգամայն ակներեւ է, որ պետական այդպիսի պարզ հրահանգի առկայության դեպքում չի կա-

րելի առանց պատասխանի թողնել նըրագեղմ ոչխարների ստեղծման ուղիների հարցը, յուրաքանչյուր մարզի, ոեսպութլիկայի և ույոնի պայմաններին համեմատ: Մեզ թվում է, որ կոպտաբուրդ ոչխարաբուծության վերափոխման ամենից ավելի ոետ և արագ միջոցը հետեւյալն է. շարունակել տրամախաչելու գաղանական կոպտաբուրդ ոչխարները տվյալ գոնայի համար հանձնարարված նըրագեղմ խոյերի հետ, առնվազն մինչեւ երրորդ սերունդը: Միայն այդ դեպքում կարող է ապահովված լինել 64 և 70 որակի նուրբ բուրդ ունեցող խառնածինների ստացումը: Դա առավել ևս անհրաժեշտ է, որովհետև ՍՍՌ-ում թեթև արդյունաբերության մինիստրության մասնագետների հաշվումներով վերամշակվող միատարր բրդի ընդհանուր քանակից 1960 թվականին 60, 64 և 70 որակի նուրբ բրդի պահանջը կկազմի 49,5%, այսինքն՝ միատարր բրդի ամբողջ պահանջի կեսը: Իսկ Հայկական ՍՍՌ թեթև արդյունաբերության մինիստրության տվյալներով նուրբ բրդի պահանջը ոեսպութլիկայի բրդամշակման արդյունաբերության կողմից 1955 թվականին կկազմի նուրբ և կիսանուրբ բրդի ընդհանուր պահանջի 60%-ը: Մեր կարծիքով, այն վախը, թե նըրագեղմ ցեղերը «կկլանեն» կոպտաբուրդ ոչխարների հատկությունները, անհիմ կերպով չափազանցված է:

Ակադեմիկոս Լիսենկոյի կողմից բացահայտված բիոլոգիական օրինաչափությունների լույսի տակ, խառնածին կենդանիները ավելի բարձր կենսականություն ունեն զտացեղերի հետ համեմատած, հետեւարար պետք է անհիմ և ոչ գիտական համարել մեխանիկական, պարզեցրած պատկերացումը նըրագեղմ ցեղերի կողմից բարելավվող ցեղերի հատկությունների կլանման մասին: Բարձր սերունդների խառնածին կենդանիներին չի կարելի դիտել որպես կենդանիներ, որոնք պասսիվ կերպով բարելավվող ցեղին կլանման են հանձնում իրենց արժեքավոր հատկությունները: Այդ կենդանիները ոչ միայն տալիս են իրենց հատկությունները, այլև իրենք էլ իրենց հերթին յուրացնում, ասիմիլացիայի են ենթարկում բարելավվող ցեղերի հատկությունները: Դեռ ավելին, տարբեր, բիոլոգիորեն հակասական, սեռական տարրերի միաձուլման հետեւանքով, երկու ժողովականորեն հեռու ցեղերի տրամախաչման պրոցեսում ստեղծվում է կենդանի մարմնի հակասականություն, որը և նոր օրգանիզմի կենսականության աղբյուր է հանդիսանում: Եվ քանի

դեռ գոյություն ունի այդ հակասականությունը, այսինքն՝ քանի դեռ կենդանին նեղ ազգակցական բուծման ճանապարհով չի հասցվել զտարյունության կամ, այսպես կոչված, մաքուր ցեղայնության, նույնիսկ երրորդ և չորրորդ սերունդների խառնածինները ավելի կենսական են լինում, քան ելակետային ցեղերը. «... կենսականության աստիճանը,—ասում է ակադեմիկոս Լիսենկոն, —տեսակի սահմաններում կախված է բեղմնավորման ժամանակ միավորված սեռական տարրերի—սկզբնակների տարբերության աստիճանից... բեղմնավորման պրոցեսը—դա մի միասնական մարմնի մեջ միավորված սեռական տարրերի փոխադարձ առիմիլացիայի-դիսիմիլացիայի պրոցես է»:¹

Ահա թե ինչու ոչ մի դեպքում չի կարելի համաձայնել մի շարք հեղինակների այն պնդման հետ, թե երկրորդ սերնդից հետո տրամախաչումը շարունակելը բերում է բարելավող ցեղի կողմից բարելավող ցեղերի հատկությունների կլանմանը և իր թե դրա հետեւանքով խառնածինների կենսականությունը նվազում է:

Միանգամայն անհիմն պետք է համարել Բ. Ն. Ֆիլիպովի և ուրիշների պնդումն այն մասին (վերը ցիտված գիրքը, էջ 210), թե նրանց հայտնի չէ ոչ մի արժեքավոր բրդատու ցեղ, որն ստեղծված լինի մսաբրդային կամ մսային ցեղերի հետ տրամախաչելու միջոցով։ Այդ պնդումն առավել ևս տարօրինակ է, քանի որ նույն հեղինակները, նույն գրքում որպես սովետական զոռտեխնիկական գիտության մեծ նվաճում նշում են ոչխարների Ղազախստանի նրբագեղմ ցեղի, Կույրիշևյան և Վրացական կիսանրբագեղմ ցեղերի ստեղծումը, որոնք ստացված են հենց տեղական կոպտաբուրդ (մսաբրդային, դմակավոր, ճարպապոչ) ոչխարները նրբագեղմ ցեղի խոյերի հետ տրամախաչելու հիման վրա։ Ղազախստանի նրբագեղմը ստեղծված է դմակավոր ոչխարները պրեկոս խոյերի հետ տրամախաչելու և իր մեջ հետագաբուծման ճանապարհով։ Կույրիշևյան կիսանրբագեղմն ստեղծված է զոռտեխնիկ Ա. Վ. Վասիլեևի կողմից չերկասյան կոպտաբուրդ մայրերը ոռմնի-մարշ ցեղի խոյերի հետ տրամախաչելու հիման վրա, իսկ Վրացական կիսանրբագեղմ ցեղը ստացվել է գիտական աշխատող Ա. Գ. Նատրաշվիլու կողմից թուշի ցեղի կոպ-

¹ Акад. Т. Д. Лысенко, Трехлетний план развития общественного колхозного и совхозного продуктивного животноводства и задачи сельскохозяйственной науки. Советская зоотехния 2, 1949 г., стр. 17.

տարուրդ մայրերը գերազանցապես պրեկոս ցեղի նրբագեղմ խոյերի հետ տրամախաչելու միջոցով։ Այս փաստերը ոչ միայն հերքում են մսաբրդային ցեղերի հետ տրամախաչելու միջոցով նրբագեղմ ցեղեր ստեղծելու անհնարինության մասին պնդումները, այլև խոսում են միջցեղային տրամախաչումների հիման վրա նրբագեղմ ոչխարների նոր հայրենական ցեղեր ստեղծելու մեծ հեռանկարների մասին։

ՎԵՐԱՓՈԽԱԿԱՆ (ԿԱՄ, ԱՅՍՊԵՍ ԿՈԶՎԱԾ, ԿԼԱՆՈՂԱԿԱՆ)
ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՏՐԱՄԱԽԱՉՄԱՆ ՄԵԹՈԴԻ ՄԱՍԻՆ

Զոռտեխնիկական գրականության մեջ տենդենց կա հակադրել այս մեթոդները միմյանց։ Ոմանք հանդես են գալիս որպես մեկ մեթոդի կողմանակիցներ, մյուսները՝ մյուս մեթոդի։ Տրամախաչման այդ երկու մեթոդների այդպիսի հակադրությունը մեզ թվում է ֆորմալ, որովհետև յուրաքանչյուր վերարտադրական տրամախաչում սկսվում է միայն այն բանից հետո, երբ ինչ որ շափով վերափոխական, կամ, այլ կերպ ասած, փոխադարձ կլանողական տրամախաչում է տեղի ունեցել։ Այդ պատճառով էլ տրամախաչման այս երկու մեթոդը ճիշտ կլիներ դիտել ոչ թե որպես մեկը մյուսին հակասողներ և փոխադարձ բացասողներ, այլ ընդհակառակը, որպես մեկը մյուսին փոխադարձ պայմանավորող և լրացնող մեթոդներ։ Այսպես, օրինակ, բուծման նոր ույոններում նրբագեղմ ոչխարներ ստանալու համար անհրաժեշտ է վերափոխական տրամախաչումը հասցնել, ասենք, մինչև երրորդ սերունդը, իսկ հետո կիրառել վերարտադրական տրամախաչման մեթոդները, ընտրությունը, ծնողական զույգերի ենթաընտրությունը և նպատակադիր դաստիարակությունը։ Իսկ եթե պահանջվում է կիսանրբագեղմ ոչխարներ բուծել, ապա այս դեպքում վերափոխական (կլանողական) տրամախաչումը բավական է կիրառել մինչև երկրորդ սերունդը և հետո օգտագործել վերարտադրական տրամախաչման մեթոդը։ Իսկ կիսակոպտարուրդ ոչխարներ ստանալու համար բավական է կոպտարուրդ ոչխարները մեկ անգամ ծածկել նրբագեղմ կամ բարձր դասերին պատկանող կիսանրբագեղմ խոյերով և առաջին սերնդի խառնածինները բուծել իր մեջ, կատարելով լավերի ընտրություն և վատերի խոտանում։

Բ. Ն. Ֆիլիպովը և Ա. Վ. Լյուբավսկի¹ միանգամայն ճիշտ ընդգծելով, որ անիմաստ կլինի բրդի մեծ պահանջի պայ-

1. Б. Н. Филиппов и А. В. Любавский, Племенное дело в тонкорунном овцеводстве, Сельхозгиз, 1951 г., стр. 187 и 194.

մաններում, ոչխարաբուծական տնտեսություններում զգալիուրեն ավելացնել աշխատանքի, կերերի ու միջոցների ծախսումը նրա համար, որպեսզի ավելացնելով ոչխարաբուծության համար երկրորդական պրոդուկտի՝ մսի արտադրությունը, զգալիորեն պակասեցնել նրա հիմնական մթերատվության՝ բրդի ելույթը, միաժամանակ նախազդուշացնում են, որ ռյուրաքանչյուր տընտեսությունում ոչխարաբուծության ուղղության հարցը լուծելիս պահանջվում է յոթ անգամ չափել և նոր մեկ անգամ կտրելու: Ոչխարաբուծության ուղղությունը որոշելու հարցում այդպիսի ավելորդ վախ առաջ բերելը մեզ թվում է միանգամայն ավելորդ, եթե չասենք ավելին: Պետք է մեր կոլխոզնիկներին և կոլխոզների ու սովխոզների ղեկավարներին վստահություն ներշնչել նրանում, որ տվյալ մարզի, ոեսպութիկայի և ռայոնի համար կառավարության և նրա օրգանների կողմից սահմանված ոչխարաբուծության ուղղությունը հանդիսանում է պետական առաջադրանք և տնտեսապես ամենապատակահարմարն է պլանային սոցիալիստական էկոնոմիկայի շահերի տեսակետից: Այլապես մի շարք տեղերում, ոչխարաբուծության ուղղության հարցը իսկապես ոչ թե յոթ անգամ են չափում, այլ երեք անգամ յոթ, իսկ կտրել ոչ մի կերպ չեն համարձակվում:

Նոր ռայոններում նրբագեղմ և կիսանրբագեղմ ոչխարաբուծության զարգացման նկատմամբ չափից դուրս զգույշ վերաբերմունքի պատճառներից մեկը հանդիսանում է այն բոլորովին չհիմնավորված կարծիքը, որ իբր թե նրբագեղմ ոչխարաբուծությունը կերակրման և պահպանման պայմանների նկատմամբ բացառիկ բարձր պահանջկոտություն է ներկայացնում. Շատ պրակտիկ աշխատողների և նույնիսկ մասնագետների մոտ այնպիսի պատկերացում է առաջացել, թե քանի որ նրբագեղմ ցեղերի բուրդը նուրբ է, ապա նրանց օրգանիզմն ու կազմվածքը նույնպես նրբացած է: Բայց իրականում ոչխարների նրբագեղմ ցեղերը, մանավանդ հայրենական ցեղերը, կերակրման ու պահպանման պայմանների նկատմամբ շատ ավելի պակաս պահանջկոտ են, քան մսային և մսաբրդային ցեղերը: Նրանք ավելի լավ են դիմանում սառնամանիքներին և տեղափոխություններին, նրանց մարսողական տրակտը շատ ավելի զարգացած է: Հասուն ամորձատված խոյերը հիանալի օգտագործում են կոպտացողուն խոտը, օշինդրը և աղուտային արոտավայրերը: Զմռան շրջանում նրանք բավարարվում են միայն խոտով, առանց լրացու-

ոիչ հյութալի կերերով կերակրվելու և համարյա առանց խտացրած կերերի: Խտացրած կերերը բրդատու ոչխարաբուծության մեջ հիմնականում օգտագործվում են արտադրող խոյերի և թույլ ոչխարների համար: Նրբագեղմ ոչխարաբուծության լավագույն գիտակները և մասնավորապես Կ. Դ. Ֆիլյանսկին¹ միանգամայն հնարավոր և նպատակահարմար են համարում ձմռան շրջանում ամործատված խոյերի (որոնք բրդային ոչխարների հոտում մեծ տեսակարար կշիռ ունեն) կերարաժնի մեջ մտցնել գարնանացան հացարույսերի ծղոտ (ավելի լավ է մանրացրած ձեռվ, որպես գարման), մեկ օրվա տրվելիք խոտի մինչև 60—70 %-ի չափով: Երիտասարդ մայրերին, հղիության առաջին կեսի ընթացքում և 8—9 ամսականից մեծ, լավ զարդացած գառներին նույնպես կարելի է օրական 0,4—0,5 կգ դարման տալ:

Նրբագեղմ ոչխարաբուծական տնտեսություններում կերի հիմնական աղբյուրները հանդիսանում են բնական արոտավայրերը և խոտհարքները, որոնցով հենց հարուստ է Սովետական Միության շրջանների մեծ մասը: Դա չի նշանակում, իհարկե, որ կոլխոզներում ու սովխոզներում չպետք է հոգ տանել նաև խտացրած ու հյութալի կերերի արտադրության մասին, որոնց ներկայությունը ուացիոնի մեջ անպայման ավելացնում է ոչխարների բրդատվությունը և բրդի որակը: Չի կարելի մոռանալ, որ բրդի աճը, նրա ելույթը և որակը որոշվում է ոչխարի օրդանիկմի դրությամբ: Միայն միջակից բարձր կամ ծայրակեղ դեպքում միջակ դիրության ոչխարների բուրդն է նորմալ աճում և պահպանվում նրա որակական ցուցանիշները: Այդ պատճառով էլ նրբագեղմ ոչխարների ուացիոնալ կերակրումը բացառիկ նշանակություն ունի մեծ քանակի և լավորակ բուրդ ստանալու համար:

ԿԵՐԱԿՐՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԲԱԳԵՂՄ ՈԶԽԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ճիշտ կերակրումը վճռական պայմաններից մեկն է հանդիսանում խառնածինների սերունդների ժառանգության մեջ բարելավող ցեղի բրդատվության լավ հատկությունները ամրապնդելու համար, որովհետև խառնածինների ժառանգականությունը, մանավանդ առաջին սերնդում, բավականաչափ կայուն

¹ К. Д. Филианский, Организация и техника тонкорунного овцеводства. Сельхозгиз, 1949 г., стр. 89.

չէ և հեշտությամբ ենթարկվում է արտաքին միջավայրի ազդեցությանը, մասնավորապես կերակրման ազդեցությանը։ Ակադեմիկոս Լիսենկոն նշում է, որ «...մետիզացիայի ժամանակական ցեղին պատվաստվող հատկանիշների և հատկությունների զարգացման համար անհրաժեշտ է ապահովել կերակրման և խնամքի այնպիսի պայմաններ, որոնք համապատասխանում են նոր բարելավող ցեղական հատկությունների զարգացմանը։ Այլապես՝ ցանկալի հատկությունները կարող են չպատվաստվել տեղական բարելավող ցեղին, իսկ տեղական ցեղի լավ հատկությունների մի մասը կարելի է նույնիսկ կորցնել»:¹ (ընդգծումը մերն է—Մ. Կ.):

Ոչխարների խառնածնային սերունդը իրեն ձևավորման պրոցեսում առանձնապես բարձր պահանջներ է ներկայացնում կերակրման պայմաններին։ Նրբագեղմ և կիսանրբագեղմ ոչխարների հիմնական արտադրանքը՝ բուրդը շատ զգայուն է կերային պայմանների նկատմամբ։ Բրդածածկի աճի ուղղակի կախվածությունը կերակրումից ապացուցված է շատ հետազոտողների կողմից։

Ակադեմիկոս Մ. Ֆ. Իվանովի փորձերով, ամորձատված խոյիկները, որոնք մսուրային շրջանի 149 օրվա ընթացքում ստացել են 69 լրացուցիչ կերային միավոր, բրդի խուզվածքը ավելացրել են 1680 գր։ Ոչ լիարժեք կերակրումը խիստ կերպով անդրադառնում է նաև բրդի որակի վրա։ Այն առաջ է բերում բրդի մանրաթելերի «քաղցած» բարակություն, որը խոշոր դեֆեկտ է հանդիսանում, և բրդամշակման արդյունաբերությանը զրկում է այդպիսի բուրդը լիարժեք օգտագործելու հնարավորությունից։ Բրդի ոչ բավարար երկարությունը ցեղային հատկանիշ լինելով հանդերձ, միաժամանակ արտաքին պայմանների ներգործության արդյունք է հանդիսանում։ Ինչ վերաբերում է բրդի բարակությանը, ապա շատ մասնագետներ և գիտական աշխատողներ, ընդունելով, որ կերակրումը ազդում է բրդի քանակի վրա, երկարության վրա, համառ կերպով ժխտում են բրդի բարակության փոփոխության հնարավորությունը կերակրման ու պահելու պայմանների ազդեցության հետևանքով, հիմնավորելով այդ տեսակետը նրանով, որ բրդի բարակությունը զոռլոգիական հատկանիշ է և չի կարող փոփոխման ենթարկվել

¹ Ակադեմիկոս Տ. Պ. Լիսենկո, Բիոլոգիական գիտության մեջ տիրող գրության մասին. Ագրոբիոլոգիա, էջ 707։

արտաքին միջավայրի պայմանների. այսինքն՝ կերակրման և պահելու ազդեցության տակ:

Որոշ հեղինակները ընդունելով, որ սննդի պակասությունը վատացնում է բրդի հատկանիշները, միաժամանակ պնդում են, որ սնման պայմանների բարելավումը միայն փոքր չափով է ազդում նրա հատկանիշների բարելավման վրա:

Յա. Լ. Գլեմբոցկին և ուր.¹ գրում են. «Օրգանիզմում տեղի ունեցող պրոցեսների դանդաղումը կամ ուժեղացումը, անխուսափելիորեն ազդում է բրդի աճի վրա, ըստ որում ոչ բավարար սնման դեպքում մեծ փոփոխականություն երևան է գալիս դեպի բրդի հատկանիշների վատացման կողմը և ավելի քիչ շափով լավացման կողմը՝ բարենպաստ կերային պայմաններում» (ընդգծումը մերն է — Ա. Կ.): Այս պնդումը բավականին տարօրինակ է, եթե չխոսնք նրա ոչ գիտական և անհամոզիչ լինելու մասին:

Չի կարելի ժխտել, որ նըրագեղմությունը նախ և առաջ ցեղային հատկություն է: Խճարկե կոպտաբուրդ ոչխարներին որքան էլ որ լավ կերակրեն, նըրանց բուրդը նուրբ չի դառնաշենց այդ պատճառով էլ կոսկտաբուրդ ոչխարները նըրագեղմերի վերափոխելու համար միջցեղային տրամախաչում է կիրառվում, խառնածինների սերնդին նըրագեղմ ցեղերի հատկությունը փոխանցելու համար: Մակայն կասկածից դուքս է, որ բրդի բարակությունը, ինչպես և երկարությունը, խտությունը, հետևապես և ելույթը սնման ազդեցության տակ փոփոխությունների են ենթարկվում: Բուրդը դա մաշկի արտադրյալն է, իսկ մաշկի հատկությունն ու հաստությունը թեպետ և ցեղային հատկանիշներ են հանդիսանում, այնուամենայնիվ, զգալի չափով կախված են նաև կերակրման ու պահելու պայմաններից: Նյութափոխանակության տիպը և սննդարար նյութերի, հատկապես սպիտակուցային նյութի ազդեցությունը մաշկի հատկության և բրդի որակի վրա պետք է նույնպես անվիճելի համարել: Այլապես ինչով բացատրել այն երևույթը, երբ միջցեղային տրամախաչումներից առաջացած նույն հոտի խառնածինները առաջին, երկրորդ և նույնիսկ հետագա սերունդներում բրդի բարակությամբ իրարից զգալիորեն տարբերվում են, թեպետ և ըստ «զտարյունության» և «սերնդի աստիճանի» նըրանք միանգամայն միե-

¹ Я. Л. Глембовский, Е. К. Дейхман, Г. А. Окуличев, Племенное дело в тонкорунном овцеводстве, ОГИЗ-Сельхозгиз. 1947 г. стр. 274.

նույնն են: Ինչպէս բացատրել, երբ միևնույն ելակետային ցեղ զերից առաջացած, միևնույն սերնդի խառնածին ոչխարների միևնույն հոտում, կենդանիների մի մասը նուրբ բուրդ է ունենում, մյուս մասը՝ կիսանուրբ բուրդ, երբորդ մասը՝ կիսակոպիտ, իսկ որոշ մասը, նույնիսկ, կոպիտ բուրդ:

Միթե կարելի է կասկածել, որ այստեղ մենք գործ ունենք արտաքին միջավայրի պայմանների և, առաջին հերթին, կերակը ըստ ներգործության հետ նոր սերնդի բըդի բարակության վրա և կենդանիների կողմից այդ միջավայրը, ինչպես նաև բարելավող ցեղի ժառանգական հատկությունների ավելի էֆեկտիվ կերպով ասիմիլացնելու անհատական ընդունակությունների հետ:

Հայտնի է, որ ծնվելուց հետո գտնները սնման տարրեր պայմանների մեջ են ընկնում: Որոշ ռերջանիկներ» ծծում են լիարժեք կտթ տվող առողջ, առատ կաթնատու մայրերին, ուրիշները, ընդհակառակը, սնվում են թույլ, սակավ կաթ ունեցող մայրերից, որոնց կաթի որակն էլ շատ հաճախ լիարժեք չի լինում: Բնական է, որ առաջիններն ավելի լավ կաճեն ու կզարդանան և ավելի լավորակ բուրդ կունենան, քան երկրորդները: Արոտային պահպանման շրջանին անցնելիս առաջիններն ավելի առողջ, եռանդուն են լինում, ավելի լավ են օգտագործում արոտավայրերը և մեկ միավոր ժամանակի ընթացքում ավելի շատ կանաչ խոտ են ուտում, քան երկրորդները: Այդպիսի կենդանիները կերերն ավելի լավ էլ մարսում են: Այսպիսով, տվյալ հոտի, իսկ առավել ևս տվյալ ֆերմայի ու տնտեսության համար ամբողջությամբ վերցրած, ընդհանուր ռմիջին պայմաններից դեպքում խառնածին կենդանիների մի մասը փաստորեն աճման ու զարգացման ավելի լավ պայմաններում են գտնվում, իսկ մյուս մասը ավելի վատ պայմաններում: Կենդանիների ընդունակությունը՝ ասիմիլացնել տվյալ միջավայրը, նույնպես տարրեր է լինում, նրանց ժառանգական հատկանիշների և անհատական առանձնահատկությունների տարրերության պատճառով: Ահա այս տարրեր պայմաններն էլ, մեր կարծիքով, հենց հանդիսանում են այն բանի պատճառը, որ միևնույն սերնդի խառնածին կենդանիները տարրերը որակի ու քանակի բուրդ են տալիս:

1940 թվականին Ոչխարաբուծության ու այծարուծության համամիութենական գիտա-հետազոտական իստիտուտի կողմից մերինոսային ոչխարների հետ կատարած փորձերը ցույց են տվել, որ, երբ գառները մայրերից կտրվում էին 2,5 ամսական հասակում, նրանց բրդի միջին խուզի քաշը մեկ տարեկան հասակում կազմում էր 2,9 կգ, բրդի երկարությունը՝ 5,7 սմ։ Այդ խմբի մեջ էլիտին և 1-ին դասին պատկանող գառները բոլորովին չկային։ Իսկ 4 ամսական հասակում կաթից կտրված գառների մոտ, համապատասխանորեն միջին խուզի քաշը կազմում էր 3,5 կգ, այսինքն՝ $20^0/0$ ավելի, բրդի երկարությունը՝ 6,9 սմ, այսինքն՝ $20^0/0$ երկար։ Այդ խմբում, մեկ տարեկան հասակում, գառների $18^0/0$ -ը էլիտին և 1-ին դասին էին պատկանում։

Մի շարք այլ հետազոտողների տվյալներով կերակրման տարրեր պայմանների մեջ դրված երկու խումբ կենդանիների բրդի խուզի քաշը և որակը համեմատելիս խիստ տարբերություն է ստացվել։ Ոչխարների մի խումբը բաժան ուղիոն էր ստացել, իսկ մյուս խումբը՝ միայն կենսապահ։ Առաջին խմբի բուրդը երկը բրդի համեմատությամբ իր քաշով $347^0/0$ տվելի է դուրս եկել և $41^0/0$ ավելի երկար է եղել։ Առաջին խըմբում նկատվել է նաև մազաթելիկների տրամագծի որոշ մեծացում։ Մի շարք փորձերով ապացուցված է, որ ռացիոնը նորմայից պակասեցվելը խիստ կերպով կրճատում է բրդի ելույթը և վատացնում է նրա որակը։

Հաստատված է նաև մայրերի հղիության շրջանի ազդեցությունը բրդի բարակության չափի վրա։

Մ. Ա. Վասիլեի տվյալներով մերինոսային ցեղերի ոչխարների մազաթելիկների տրամագիծը, որը մինչև հղիությունը միջին հաշվով $21-21,5$ միկրոն էր, 6 շաբաթյա հղիության ժամանակ իջնում է մինչև 18 միկրոնի, իսկ 18 շաբաթյա հղիության պահին իջնում է մինչև $16,97$ միկրոնի։

Կերակրման պայմանների նկատմամբ հատկապես զգայուն են խառնածին մատղաշները։

Նըրագեղմ խոյերի հետ կոպտաբուրդ մայրերի տրամախաչումը խախտում է կոպտաբուրդ ոչխարների կոշտ, քստամազային ոչ միատարր բուրդ տալու կոնսերվատիվ ցեղային հատկությունը։ Որպեսզի խառնածին սերունդը կարողանա ընկալել, յուրացնել (առիմիլացնել) բարելավող ցեղի բրդի բարակությունը և այն դարձնել սեփական ցեղային հատկություն, անհրաժեշտ են

արտաքին միջավայրի համապատասխան պայմաններ և ամենից
առաջ, առատ-լիարժեք կերակրում, մանավանդ նոր օրդանիզմի
ձևավորման շրջանում, այսինքն՝ սաղմնային և կաթնային շրջա-
նում:

* * *

Կոպտաբուրդ ոչխարաբուծությունը վերակառուցելու տևմ-
ալերի դանդաղեցման գլխավոր պատճառներից մեկը հանդիսա-
ցել է տեղական սչխարների, այսպես կոչված, «արժեքավոր հատ-
կությունների» ավելորդ գերազնահատումը, ինչպես նաև որոշ
մասնագետների ավտոգենետիկ-մենդելիստական պատկերա-
ցումը տրամախաչման մասին, որոնք պնդում են, թե առաջին
սերնդից հետո տրամախաչումը շարունակելը կհասցնի սերնդի։



Ն. 6. Մաղեխ և կովկասյան ցեղի խառնածին խոյ, երրորդ սերնդի։
Աճեցված է Նոր Բայազետի շրջանի Սարուխան գյուղի կոլխոզում։ 4
տարեկան, կենդանի քաշը 72 կղը, քրղի ելույթը 5,7 կղը, բուրդը
առաջին դասի է։

Ճեղքավորմանը և տեղական ցեղերի այլասերմանը։ Եյլ մաս-
նագետների պնդումներն այն մասին, թե կոպտաբուրդ ոչխաբ-
ներից ստացված բարձր սերունդի խառնուրդները մեր պայ-

մաններում չեն կարող գոյություն ունենալ և ապրել, միշտ-
րինյան բիոլոգիայի և սովետական ոչխարաբուծության պրակ-
տիկայի կողմից լիովին հերքված են:

Թույլ կտամ ինձ կոլխոզային պրակտիկայից բերելու երկու
օրինակ՝ Հայկական ՍՍՌ Նոր Բայազետի ուայոնի ավագ
զոռտեխնիկ բնկ. Լ. Սիրունյանի հաղորդման համաձայն, այդ
ուայոնի Բատիկի անվան կոլխոզի ոչխարի հոտը, քանակով 700
գլուխ, այդ թվում 350 գլուխ խառնածիններ, 1945 թվականին բուքի
տակ ընկան և ամբողջ գիշերը մնաց ձյան տակ: Առավոտյան
հայտնաբերվեց, որ 45 սատկած ոչխարներից 43-ը տեղականներ
էին և միայն 2-ը խառնածին:


1949 թվականի ձմռանը նույն կոլխոզում նույնանման դեպք
տեղի ունեցավ: 2000 գլուխ ոչխար բուքի տակ ընկան, որոն-
ցից մոտ 1000 գլուխ առաջին և երկրորդ սերնդի խառնածիններ
էին: Առավոտյան հայտնաբերվեց, որ 250 գլուխ սատկել են և բո-
լորն էլ տեղական մազեխ ցեղի ոչխարներ էին, իսկ խառնածին-
ներից ոչ մի ոչխար չէր տուժել:

Սովետական զոռտեխնիկական գիտությունը բազմաթիվ
սովորությունների ու կոլխոզների օրինակով անհերքելիորեն ապացու-
ցել է խառնածին կենդանիների գերազանցությունը ելակետա-
յին ցեղերի նկատմամբ ինչպես կենսականության, բիոլոգիա-
կան կայունության, այնպես էլ արդյունավետության տեսակե-
տից: Հայաստանի պայմաններում կոպտաբուրդ ոչխարներից
ստացված առաջին և երկրորդ սերնդի խառնածինները շատ
ավելի բարձր կենդանի քաշ ունեն, ավելի կաթ են տալիս (էլ
չխոսելով բրդի որակի ու քանակի մասին), ավելի կենսակայուն
են, ավելի պտղավետ (շատ զույգեր են տալիս), քան տեղական
բարելավվող մազեխ, բոզախ, զարարադ և այլ ցեղերը:

Միջնադարյան տրամախաչումների մեթոդով Սովետական
Միության մեջ ստեղծված ոչխարների նոր նրբագեղմ ցեղերը՝
հայոնի ասկանիական ցեղը, որ ստացվել է ակադեմիկոս Մ. Ֆ.
Իվանովի կողմից, կովկասյան, ստավրոպոլյան և ալտայան ցեղերը,
ադրբեջանական լեռնային մերինոսը, Գրոզնու նրբագեղմերը,
սովետական մերինոսները, Ղազախստանի նրբագեղմ ցեղը, կույ-
րիշեյան, վրացական և գորկովյան կիսանըրագեղմ ոչխարների
ցեղերը, որոնք ստացվել են վերջին տարիները նրբագեղմ ցե-
ղերը կոպտաբուրդ ցեղերի հետ տրամախաչելու միջոցով, լավա-
գույն ապացույց են հանդիսանում այն բանի, որ միանդամայն

հնարքով է բարձր սերնդի խառնածինների վերարտադրական արամախաչման միջոցով նըրագեղմ և կիսանըրագեղմ ոչխարների ցեղեր ստանալը:

Դեռ շատ տարիներ առաջ Պ. Ն. Կուլեշովը անդրագառնալով Ռուսաստանում նըրագեղմ ոչխարաբուծությունը զարգացնելու հարցին, գրել է. «Ոչխարաբուծության պատմությունից պետք է հիշել, որ Ռուսաստանում մերինուների բուծման ոկզրին շատերը նախագուշակում էին նույնպես, որ մեր հարավային նահանգների կլիման և այլ պայմանները պիտանի չեն այդ ցեղի համար, իսկ ոկրակտիկան միանգամայն հակառակն ապացուցեց»¹ (ընդգծումը մերն է — Ս. Կ.):




Նկ. 7. Բալբաս և կովկասյան ցեղի խառնածին (մետիս), երրորդ սերնդի: Աճեցված է նոր Բայազետի շրջանի Սարուխան գյուղի կոլխոզում, 5 տարեկան, կենդանի քաշը 85 կգը, բրդի ելույթը 5,7 կգը, ըուրդը առաջին դասի:

Մեծ թվով հետազոտությունների նյութերի հիման վրա պարզված է, որ խառնածինները ելակետային ցեղերի համեմատությամբ ավելի ինտենսիվ են զարգանում: Այսպես, օրինակ,

¹ Проф. П. Н. Кулешов, Грубошерстное овцеводство. 1925 г., стр. 70.

ռամբուլյեն մազեխի հետ տրամախաչելուց ստացած առաջին սերընդի խառնածին գառների կենդանի քաշը կաթից կտրելու ժամանակ գերազանցում էր տեղական ելակետային մազեխ ցեղի գառներից՝ էգ գառներինը—2,0 կգ, իսկ խոյիկներինը՝ 0,75 կիլոգրամով։

Որոշ մասնագետների պնդումն այն մասին, որ երկրորդ սերնդի խառնածինները անբավարար մարմնակազմ ունեն և ետ են մնում առաջին սերնդի խառնածիններից, նույնիսկ առաջին սերնդի խառնածին մայրերին տեղական խոյերի հակադարձ տրամախաչումից ստացած խառնածիններից, պետք է համարել միանդամայն անհիմն և հակառակ կոլխոզային պրակտիկայի բազմաթիվ




Նկ. 8. Մազեխի և կովկասյան ցեղի խառնածին մաքի, III սերնդի։
Աճեցված է Նոր Բայազետի շրջանում, Յ տարեկան, կենդանի քաշը
52 կգը, բրդի ելույթը 3,6 կգը. բուրդն ընտիր տեսակի է։

փաստերին։ Երկրորդ սերնդի խառնածինների՝ իրենց մարմնակազմով ետ մնալու առանձին դեպքերը պետք է բացատրել միայն վատ կերակրումով և վատ խնամքով։

Հետևողականորեն ընդգծելով միջցեղային տրամախաչումը համարձակորեն անցկացնելու և ոչխարների կոպտաբուրդ ցեղերը նրբագեղմ և կիսանըբագեղմ ցեղերի վերափոխելու անհրաժեշտությունը, չպետք է, իհարկե, ժխտել տեղական ցեղերի որոշ օգտա-

կարևոր կազմակերպությունների (Հայաստանի պայմաններում բարձր կաթնատվությունը, լավ հարմարվածությունը բնական խիստ կոնտինենտալ պայմաններին, բարձրորակ միսը և այլն) ղուգակցման նպատակահարմարությունը բարելավող ցեղի հատկությունների հետ։ Հենց այս հանդամանքով պետք է բացատրել այն փաստը, որ Սովետական Միությունում մենք չենք սահմանափակվում արդեն ստեղծված նրբագեղմ և կիսանըրագեղմ ցեղերի առկայությամբ, այլ հետեւզական աշխատանք է կատարվում նուրբ և կիսանաւրբ բուրդ ունեցող նոր ցեղեր ստանալու ուղղությամբ առանձին տնտեսական շրջանների տեղական պայմաններին համապատասխան։ Այդ հրամայորեն պահանջում է մեր լոյնածովուն երկրի քնական և արտագրական



Նկ. 9. Մազեխի և կովկասյան ցեղի 11 սերնդի խառնածին մաքի Աճեցված է նոր Բաւաղետի շրջանի Սաղուխան գյուղի կոլխոզում, 4 տարեկան, կենդանի քաշը 53 կգը, քրդի միջին ելույթը 11 սերնդի հոտում կազմել է 3,2 կգը, բուրդը՝ նույը է։

պայմանների բազմազանությունը։ Պետք է ընդունել, որ գործնականորեն բացառվում է այնպիսի ունիվերսալ նրբագեղմ կամ այլ ցեղի ստեղծման հնարավորությունը, որը միատեսակ պիտանի լիներ Սովետական Միության բոլոր աշխարհագրական և տըն-

տեսական գոտիների համար. Հենց այդ պատճառով էլ անհրաժեշտություն է հնարավորին չափ համակցել բրդի արտադրանքը ոչխարների մյուս տեսակի արտադրանքների հետ, մասնավորապես մսային, իսկ առանձին գեղքերում նաև կաթնային, ինչպիսին օրինակ, Հայկական, Վրացական և Ադրբեջանական ՍՍՌ-ներում։ Այս տեսակետը պետք է ընդունել, թեզետև ոչխարաքուծության գծով այնպիսի հեղինակավոր գիտնական, ինչպիսին պրոֆ. Պ. Ն. Կուլեշովն է, պնդում էր, որ «...մինչև այժմ գեռ չի հաջողվել մի ոչխարի մեջ լիսովին միացնել բարձր զարգացած մսայնությունը և արտահայտված բրդա-արտադրողականությունը»:¹




Նկ. 10. I, II և III սերնդի խառնածինների հոտի ընդհանուր տեսքը:
Նոր Բայազետի շրջան, Սարուխան գյուղի կոլխոզ։

Այս բոլորից հետո էլ, սակայն, մեկ անգամ ևս պետք է ընդգծել, որ ոչխարների տարրեր մթերային հատկությունների գուգակցությունների գեղքում առաջնություն պետք է տալ բրդային պրոդուկցիային, քանի որ այն հանդիսանում է ոչխարաքուծության գլխավոր ար-

¹ Проф. П. Н. Кулешов, Овцеводство. 1925 г., стр. 54.

տադրանքը, Գյուղատնտեսական կենդանիներից
ոչ մեկը բուրդ չի տալիս, մինչդեռ միս տալիս
են բոլոր տեսակներն էլ, կենդանական ճարպ
նույնպես համարյա բոլոր տեսակները, իսկ կտթի
և պանրի պրորեմը լուծում է կաթնատու կովը.
Աճա թե ինչու ոչխարների տված մթերքներից
և ոչ մեկը չի կարող մըցել բրդի հետ. Այսպիսով,
ոչխարների խաչաձեռղ ցեղերի տարրեր մթերային հատկություն-
ները զարգացնելու հարցերը քննարկելիս զեկավարող սկզբունքը
պետք է լինի ոչխարաբուծության առաջ գրված գլխավոր խնդրի
հաջող լուծումը, այն է՝ բրդի ելքի զդալի ավելացումը և նրա



Նկ. 11. Կովկասյան ցեղի զտարլուն խո, № 80398. Օգտագործվում է չայաստանի կոլխոզներում որպես բարելավող, և տարեկան, կենդանի քաշը 69 կգը, բրդի ելույթը 6,8 կգը, բուրդը առաջին դասի է:

որակի բարձրացումը: Պետական այդ դիրեկտիվին, որը պլա-
նային տնտեսության հիմքն է կազմում, պետք է ենթարկվիր
ոչխարաբուծության բնագավառում աշխատող գիտնականների
ու պլակտիկների ողջ գործունեությունը:

Կոպտարուրդ ոչխարաբուծության արմատական վերակա-
ռուցման և նրագեղմ ու կիսանրբագեղմ ոչխարաբուծության

հետագա զարգացման հեռանկարները իրենց լրիվ արտացոլումն են ստացել կառավարության վերջին որոշումների մեջ, որոնց նշանակությունը արդյունաբերական ոչխարարուծության զարգացման, բրդի որակի արմատական բարելավման և նրա համախառն արտադրանքի ավելացման գործում դժվար է գերազնահատել:

Պարզ ցուցումներ են տրված հանրային կոլխոզային ու սովխոզային ոչխարարուծության հետագա զարգացման ուղիների մասին։ Այդ ցուցումների մեջ արտացոլված է ՍՍՌՄ-ում նրբագեղմ և կիսանրբագեղմ ոչխարարուծության հզոր զարգացման ուղին, Սովետական Միության բրդամշակման արդյունաբերության անընդհատ աճող պահանջի լրիվ բավարարման համար։ Լիակատար պարզություն է մտցված բրդի նոմենկլատուրայի մեջ։ Լիկվիդացված է ամեն մի սողանցք «Նրբագեղմ» և «կոպտարուրդ» ոչխարարուծություն» հասկացողությունների ազատ մեկնաբանման և «կիսանուրբ» ու «կիսակոպիտ» բուրդ հասկացողությունները իրար խառնելու։

Ցեղերի շրջանացման վերաբերյալ սահմանված են ոչխարարուծության զարգացման հետեւյալ զոնաներն ու ուղղությունները՝ նրբագեղմ ոչխարարուծության զոնա, նրբագեղմ և կիսանրբագեղմ ոչխարարուծության զոնա, նրբագեղմ-կիսանրբագեղմ և մասամբ մսա-բրդա-կաթնային ոչխարարուծության զոնա, կիսանրբագեղմ-մսաբրդային ոչխարարուծության զոնա, մուշտակային ոչխարարուծության զոնա և մորթատու (կարակուլային) ու մսա-ճարպային ոչխարարուծության զոնա։

Բրդի մթերման վերաբերյալ պետական առաջադրանքը սահմանում է չորս կատեգորիա՝ նուրբ, կիսանուրբ, կիսակոպիտ և կոպիտ բուրդ։

Սկսած 1951թ. հունվարի 1-ից մեծ արտոնություններ ու խրախուսանքներ են նախատեսվում նրբագեղմ և կիսանրբագեղմ ոչխարարուծության զարգացման համար։ Պետությանը 1 կգ. նուրբ բուրդ հանձնելու դեպքում, բացի գնման արժեքից, կոլխոզի պարտավորությունների դիմաց հաշվվում է 6 կգ ֆուրաժային կուլտուրաների հատիկ։ Մեկ կիլոգրամ կիսանուրբ բուրդ հանձնելու դեպքում համապատասխանողեն հաշվվում է 4 կգ, կիսակոպիտ բուրդ հանձնելու դեպքում՝ 3 կգ, իսկ յուրաքանչյուր կիլոգրամ կոպիտ բուրդ հանձնելու դեպքում՝ 1,5 կգ։ Պետությանը հանձնած յուրաքանչյուր կիլոգրամ նուրբ բրդի համար,

նուրբ և կիսանուրբ բրդի պարտադիր մթերումները կատարած և գերակատարած կոլխոզներին մսամթերման պարտավորության դիմաց հաշվվում է 1 կգ միս, յուրաքանչյուր կիլոգրամ կիսանուրբ բրդի համար՝ 0,5 կգ, Բնորոշ է, որ այս արտոնությունը կիսակոպիտ և կոպիտ բրդի վրա չի տարածվում:

Գետությանը հանձնած յուրաքանչյուր մեկ կիլոգրամ նուրբ բրդի դիմաց կոլխոզին վաճառվում է 6 կգ խտացրած կեր: Կիսանուրբ բրդի յուրաքանչյուր կիլոգրամի դիմաց՝ 4 կգ, կիսակոպիտ բրդի մեկ կիլոգրամի դիմաց 2 կիլոգրամ և յուրաքանչյուր կիլոգրամ կոպիտ բրդի դիմաց 1 կգ խտացրած կեր (քուսպ, թեփ, կոմքիկեր, ֆուրուժային հատիկ): Մեծ խրախուսանքներ են նախատեսվում գրամական վճարումների մեջ, կոլխոզի կողմից բրդի պետական մթերումը 100-ից ավել՝ մինչև 105% կատարելու դեպքում, ներկայումս գործող գրամական հավելման (50% մթերման դնի վրա) վճարման հաշվառքների համար սահմանված հեկտարային նորման պակասեցվում է 20%-ով, այսինքն՝ վճարվում է բրդի համար գործող գրամական հավելումը, սահմանված հեկտարային նորմաների 80%-ից ավել հանձնելու դեպքում:

Այն կոլխոզներին, որոնք բրդի հանձնման պարտավորությունների պլանը կատարել են 105—110 %, գրամական հավելումը վճարվում է սահմանված հեկտարային նորմայի 70 %-ից ավել հանձնված բրդի համար, իսկ այն կոլխոզներին, որոնք հանձնումների պլանը կատարել են 110 %-ից ավել, գրամական և հավելյալ վճարման հաշվարկների համար սահմանված հեկտարային նորման իջեցվում է 35%-ով, այսինքն՝ սահմանված հեկտարային նորմայի 65%-ից ավել հանձնած ամբողջ բրդի համար վճարվում է գործող գրամական պարզե-հավելումը:

Հայկական ՍՍՌ կոլխոզների օրինակի վրա կարելի է ցույց տալ, թե ինչպիսի մեծ շահ են ստանում նրանք, երբ զարգացնում են նրբագեղմ և կիսանրբագեղմ ոչխարարությունը: 1950 թ. մեր ռեսպուբլիկայի կոլխոզների բրդից ստացած տարեկան գրամական եկամուտը կազմել է ընդամենը 7.263 հազար ռուբլի: Այդպիսի ցածր եկամտաբերության պատճառն այն է, որ Հայաստանի կոլխոզներում ոչխարների գերիշող մեծամասնությունը, մոտ 75 % կոպիտ բուրդ է տալիս: Մոտակա 4—5 տարում նրբագեղմ և կիսանրբագեղմ ոչխարների

զարգացման պետական պլանը կատարելու դեպքում, ելնելով բրդի խուզի պլանային առաջադրանքից, կոլխոզների բըրդից ստացվող դրամական եկամուտը կհասնի մի քանի տասնյակ միլիոն ռուբլու։ Բացի այդ, կոլխոզները պետական ռեսուրսներից տարեկան կոտանան 6 հազար տոննայից ավելի խտացրած կեր և մի շաբաթ այլ արտոնություններ, որոնց մասին վերևում խոսվեց։

Այս միջոցառումները հզոր խթան կհանդիսանան երկրում նրբագեղմ և կիսանրբագեղմ ոչխարաբուծության զարգացման գործում, որը բացառիկ նշանակություն ունի ժողովրդական տնտեսության նուրբ և կիսանուրբ բրդի պահանջը բավարարելու համար։

Պետական առաջադրանքի համաձայն, Հայկական ՍՍՌ-ի կոլխոզներում զարգացվելու է նրբագեղմ-կիսանրբագեղմ և մասամբ մսա-բրդա-կաթնային ոչխարաբուծությունը։ Ռեսպուբլիկայի կոլխոզներում ու սովխոզներում բուծելու համար հանձնարարված են կովկասյան ցեղը, ադրբեջանական լեռնային մերինոսը և պրեկոսը. տեղական կոպտաբուրդ և խառնածին ոչխարները նըշված ցեղերի հետ խաչաձևելու համար նուրբ և կիսանուրբ բուրդ ունեցող ոչխարներ ստանալու նպատակով, ընդ որում նրբագեղմ և կիսանրբագեղմ ոչխարների գլխաքանակն ընդհանուր հոտի 70 %-ից պակաս չպետք է լինի։ Բուծվելու են նաև կոպտաբուրդ բալրաս և կարակուլ ցեղերը և այդ ցեղերով բարելաված ոչխարները. Այսպիսով, Հայաստանում նրբագեղմ ոչխարաբուծությունը զարգացնելու պարզ հեռանկար է նախանշվում։ Ռեսպուբլիկայի կոլխոզներում ու սովխոզներում գոյություն ունեցող խառնածին ոչխարների քանակը հնարավորություն է տալիս ոչ միայն կատարել, այլև գերակատարել պետական առաջադրանքը նրբագեղմ և կիսանրբագեղմ ոչխարների գլխաքանակը ավելացնելու վերաբերյալ։

Այդ խնդրի հաջող կատարմանը կնպաստի ոչխարների կերակրման ու պահելու պայմանների զգալի բարելավումը ինչպես ամառային, այնպես էլ հատկապես ձմեռային շրջանում և ընթացիկ տարվանից սկսած արտագնաց ոչխարաբուծությանը վերջ դնելը։

Կոլխոզների, սովխոզների և գյուղատնտեսական օրգանների ղեկավարների առաջնահերթ խնդիրը պետք է հանդիսանա ոչխարների պահպանման ամառային արոտային շրջանի և ձմեռային մսուրային շրջանի միջև եղած խիստ կոնտրաստի լիկվիդացումը։

Այն ժամանակ, երբ արոտային շրջանում՝ սկսած մայիսից մինչև հոկտեմբեր ամիսը, ոչխարները կերակրման բացառիկ բարենպաստ պայմանների մեջ են գտնվում, երբ նրանք արածում են խոտով հարուստ ալպյան և սուրալպյան արոտավայրերում, որպես խմելու ջուր օգտագործելով լեռնային գետակներն ու վճիռ սառնորակ աղբյուրները, հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներից սկսած նրանք ընկնում են կերակրման խիստ վատացած պայմանների մեջ։ Եթե համեմատենք ոչխարների ընդունած կերի քանակը կերային միավորներով, ամառային և ձմեռային շրջաններում, ապա դժվար չի լինի համոզվել, որ մսուրային շրջանում կերարաժինը համարյա կիսով չափ պակասում է, իսկ պրոտեինային հարաբերությունը ավելի է վատանում, սպիտակուցային կերերի պակասության պատճառով։ Զմեռը ոչխարանոցները մեծ մասամբ լինում են չքարեկարգված, մութ, առանց բավարար օդափոխության։ Կերակրման և պահպանման այդպիսի պայմաններում ոչխարները մսուրային շրջանում կորցնում են իրենց աշնանային կենդանի քաշի 25% -ից ավելին։ Եթե նաշվի առնենք, որ ձմեռային շրջանը համընկնում է հղիուրյան ժամանակաշրջանի հետ, երբ մայրերը պտղի զարգացման համար լրացուցիչ սննդի կարիք են զգում, ապա պարզ կդառնա, թե ոչխարների կյանքի մսուրային շրջանն ինչպիսի անբարենպաստ պայմաններում է ընթանում։ Այս հանգամանքը անխուսափելիորեն առաջացնում է ոչխարների բըդի ծածկոցի աճման դանդաղեցում, նրանք ապրիլի վերջերին, մայիսի սկզբներին արոտավայր են գուրս գալիս նոսր, թույլ բըդածածկով և ի վիճակի չեն լինում գարնանային խուզի ժամանակ (մայիսի վերջին, հունիսի սկզբին) բըդի նորմալ ծածկոց աճեցնել։ Այդ պատճառներով էլ հենց ստացվում է բըդի ցածր խուզ, որը կոպտարուրդ ոչխարների մոտ չի անցնում $1,5$ կիլոգրամից։ Կոպտարուրդ ոչխարների բըդի ցածր ելույթը, իհարկե, պայմանավորվում է նաև նրանց ցեղային հատկություններով։ Սակայն, ինչպես վերևում նշեցինք, կերային գործոնի և խնամքի պայմանների դերը ոչխարների բըդի արտադրանքի ավելացման գործում, անկախ նրանց ցեղային տարբերություններից, չափազանց մեծ է։

Ոչխարարուծության Համամիութենական ինստիտուտի տվյալներով մսուրային պայմաններում, հաշվի առնելով հղիության երկրորդ շրջանը և լակտացիայի առաջին շրջանը, յուրաքանչյուր նրբագեղմ ոչխարի համար պահանջվում է 155 կե-

լրային միավոր. Դա նշանակում է, որ ոչխարի օրական կերաբաժինը պետք է պարունակի:

Մարզագետնային կտմ ցանովի խոտ . .	2,2 կգ
Սիլոս	1—2 կգ
Խտացրած կերեր	0,2—0,3 կգ

և անհրաժեշտ քանակությամբ հանքային օժանդակ կեր:

Այսպիսի հարուստ ռացիոնի ծախսը կարելի է ծածկել միայն նրբագեղմ և կիսանըբագեղմ ոչխարարութության դեպքում։ Կոպտարուրդ ոչխարարութության դեպքում այս նորմաները կարող են 30—40 % կրճատվել։ Բայց մեր տեղական ոչխարները ձմեռվա շրջանում նույնիսկ այդ կրճատված ռացիոնն էլ չեն ստանում։ Նրանց տրվում է մաքսիմում 1 կգ խոտ և մոտ 1 կգ դարման։ Խտացրած կերեր և սիլոս նրանք, որպես կանոն, չեն ստանում։

Վերևում բերված կերակրման նորմաների ապահովելը միայն մեկ երկու տարում կկրկնապատկի տեղական ոչխարների բրդի ելույթը (մինչև տրամախաչման ավտրոտումը նրանց գլխաքանակը կոլխոզներում կկազմի մի քանի հարյուր հազար գլուխ) և մեկ կոպտարուրդ ոչխարից 2—2,5 կդ բուրդ ստանալը կդառնա ոեալ հնարավորություն։ Իսկ խառնածին նրբագեղմ և կիսանըբագեղմ ոչխարների խուզը նորմալ կերակրման, խնամքի և պահպանման դեպքում կարելի է հասցնել մինչև 4—5 կգ։

Հայկական ՍՍՌ կոլխոզները բնական խոտհարքների և ցանովի բազմամյա խոտերի բավարար տարածություններ ունեն, ձմեռային շրջանում ոչխարների և այլ տեսակի անասունների ամրող գլխաքանակի լրիվ պահանջը ապահովելու համար։ Ինչ վերաբերում է ծղոտին—դարմանին, ապա հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունների լայնացման կապակցությամբ, նրա պաշարները լի ու լի կծածկեն անասնապահության պահանջները։ Կոլխոզների անհետաձգելի խնդիրն է հանդիսանում առաջիկա մեկ-երկու տարում զգալիորեն բարձրացնել ինչպես բնական, այնպես և ցանովի խոտերի բերքատվությունը։

Վերջապես անհրաժեշտ է կանգ առնել ևս մեկ գործոնի վրա, որը նույնպես անմիջական առնչություն ունի բրդի ելույթի ավելացման և որակի բարելավման հետ։ Մենք նկատի ունենք ոչխարների կիթը։ Հայաստանի պայմաններում տեղական և խառնածին մայրերին կթում են 4,5—5 ամսվա ընթացքում, սկսած մայիսից մինչև սեպտեմբերը ներառյալ։ Զհաշված գառ-

ների ծծածը, տեղական ոչխարների և խառնածինների կիթը կազմում է 45—50 կգ, ըստ որում ամռան ամիսներին որոշ կոլխոզներում հնարավոր են համարում ոչխարներին կթել նույնիսկ օրական երեք անգամ։ Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ոչխարների այդպիսի երկարատև կթելը խիստ բացասաբար է անդրադառնում նրանց գիրության և հատկապես ոչխարների բրդածածկի աճման վրա։ Մայրերի ինտենսիվ կիթը զրկում է գառներին առատ սպիտակուցային սննդից և անդրադառնում է նրանց նորմալ աճի ու զարգացման վրա, երիտասարդ օրգանիզմների ձևավորման ամենապատասխանառու շրջանում։ ՍՍՌՄ Սովխոզների մինիստրության Ալագյազի ոչխարուծական սովխոզում (Հայկական ՍՍՌ) կատարված փորձերով պարզված է, որ ոչխարների կթման շրջանը 2—3 ամսով կրճատելու դեսլքում գառների քաշի օրական միջին աճը կրկնապատկվում է 90 գրամից հասնելով մինչև 200 գրամի։ Կթման շրջանի կրճատումը անկանոնացնելու մեջ է նաև բրդի ինտենսիվ աճմանը։

Բրդի ելույթը ավելացնելու կտրենոր պայմաններից մեկը ոչխարների լավ խնամքն ու պահպանումն է, մանավանդ ձմեռային շրջանում։ Ահա թե ինչու ոչխարների ձմեռված պահպանման համար, տիպային կուլտուրական ոչխարանոցների կառուցման հարցը բացառիկ կարենոր նշանակություն է ստանում։ Շատ կոլխոզների օրինակով կարելի է հաստատված համարել, որ խոնավ, մութ, չօդափոխվող, նեղվածք շենքերում ոչխարների պահելը բրդի կեղտոտման և նրա զգալի մասի կորստի, ինչպես նաև ոչխարները քսով և այլ հիվանդություններով վտրակվելու պատճառ է հանդիսանում։ Այդպիսի պայմաններում ոչխարները կորցնում են իրենց բրդի 25—30 %, իսկ մեխանիկական խառնուրդներով կեղտոտված բուրդը հնարավորություն չի տալիս հաջողությամբ կիրառել էլեկտրոմեխանիկական խուզումը, որը, համեմատած ձեռքի խուզման հետ, միջին հաշվով 10—15 % ավելացնում է բրդի ելույթը։ Հայաստանի շատ կոլխոզների փորձը այս տարի ցույց տվեց, որ էլեկտրոմեխանիկական խուզումը, ձեռքի խուզման հետ համեմատած, բրդի ելույթը յուրաքանչյուր ոչխարից ավելացնում է 150—200 գրամով։

Այդ պատճառով էլ ոչխարներին համապատասխան կուլտուրական շենքերով ապահովելու հարցը նույնպիսի կարենոր նշանակություն ունի, ինչպես և կայուն կերի բազա ստեղծելու հարցը։

ԿՈՊՏԱՅԻՐԴԻ ԵՎ ԿԻՍԱԿՈՊՏԱՅԻՐԴԻ ՈՉԽԱՐՆԵՐԸ ԵՐԿՈՒ ՆՎԱԳ
ԽՈՒԶԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Մինչև վերջին երկու տարին մեր ոեսպուբլիկայի կոլխոզները գարնանային խուզը ձգձգում էին մինչև հուլիսի երկրորդ կեսը, այդ պատճառով էլ երկրորդ-աշնանային խուզ, որպես կանոն, չէին կատարում։ Վերջին երկու տարվա փորձը ցույց տվեց, որ առաջին, այսինքն՝ գարնանային խուզը պետք է սկսել մայիսի երկրորդ կեսին և ավարտել հունիսի սկզբին։ Այդ դեպքում բավականաչափ ժամանակ է մնում (մոտ երկու և կես ամիս) նոր լիարժեք բրդածածկի աճման համար։ Երկրորդ խուզը օղոստոսի 15—20-ից անցկացնելը ոչխարներին հնարավորություն է տալիս մինչև աշնան-ձմռան ցրտերը սկսվելը բրդի բավականաչափ խիտ բրդածածկ աճեցնել։ Մեր ոեսպուբլիկայի բազմաթիվ կոլխոզների փորձը ցույց է տալիս, որ կոպտաբուրդ և կիսակոպտաբուրդ ոչխարների երկու նվագ խուզելը, այլ հավասար պայմաններում բրդի ելույթը ավելացնում է 35—40 %։

Եթե մեկ անգամ խուզելու դեպքում բրդի ելույթը մեկ ոչխարից կազմում է 1, 2—1,6 կգ, ապա երկու նվագ խուզելու դեպքում այն հասնում է 1,7—2,0 կգ, հաշվելով նաև գառների բուրդը։ Անցյալ տարի Հայկական ՍՍՌ շատ կոլխոզներ երկրորդ խուզի բրդի բարձր ելույթ ստացան։ 1950 թվականին Հայկական ՍՍՌ Գյուղատնտեսության մինիստրության կողմից Ախուրյանի ռայոնի 7 կոլխոզներում անցկացրած ստուգիչ խուզի պաշտոնական տվյալներով, երկրորդ խուզից միջին հաշվով ստացվել էր մեկ գլխից մեկ կիլոգրամ բուրդ, Սպիտակի ռայոնի չորս կոլխոզներում 3833 ոչխարից միջին խուզ էր ստացվել մինչև 970 գր, Շամշադինի ռայոնում 3720 ոչխարից ստացվել էր 830-ական գրամ բուրդ։ Գորիսի ռայոնի Այգեձոր գյուղի կոլխոզում բոլոր հասուն ոչխարների երկրորդ խուզից ստացվել էր 800-ական գրամ բուրդ, որի հետևանքով այդ կոլխոզում տարեկան խուզը մեկ ոչխարից կազմեց 2,5 կգ ոեսպուբլիկայի միջին 1,5 կգ դիմաց (ներառյալ գառների բուրդը)։

Անհրաժեշտ է նշել, որ շատ կոլխոզների ղեկավարներ և նույնիսկ մասնագետների մի մասը կասկած է հայտնում երկրորդ խուզի նպատակահարմարության մասին, բացատրելով այդ նրանք, որ երկրորդ խուզից հետո բրդի նոր ծածկոցը չի հասցնի աճել, որի հետևանքով ոչխարները կմրտեն, կհիվանդանան և

անկում տեղի կունենա։ Այս վախը, սակայն, ոչնչով չի հիմնաւ-
վորված և հենց պրակտիկայի կողմից հերքվում է։ Ասածի համար
լովագույն ապացույց կարող է ծառայել այն փաստը, որ ամեն
տարի մեր ոեսպուրլիկայի և Անդրկովկասի այլ ոեսպուրլիկա-
ների կոլխոզները աշնանը, օգոստոսի 15—20-ին նույն տարվա
ծնված, այսինքն՝ 5—6 ամսական հարյուր հազարավոր կոպտա-
բուրդ և կիսակոպտաբուրդ գառներ են խուզում, որոնք, ինչպես
հայտնի է, ամենից ավելի են ենթակա մըսելու հիվանդություն-
ների. սակայն հարյուրավոր տարիների փորձը ցույց է տալիս,
որ այդ գառները միանգամայն բարենպաստ կերպով ձմեռում
են։ Համենայն դեպս դժվար է հիշատակել թեկուղ մի փաստ,
որ կոլխոզները հրաժարվեն տվյալ տարին ծնված գառներին
խուզելուց, վախենալով, որ նրանք կմրտեն։ Այստեղ, հասկանալի
է, նկատի չունենք այն դեպքերը, երբ շատ ուշ ծնի կամ այլ
պատճառների հետևանքով մատղաշը թույլ է զարգացած և բրդի
բավականաչափ ծածկոց չունի։ Այդպիսի կենդանիներին, իհար-
կե, խորհուրդ չի տրվում ձմեռնամուտին խուզել։

Ինչպես ցույց են տալիս մեր դիտողությունները, վաղ գար-
նանային խուզը նպաստում է բրդի արագ աճմանը։ Երկու նվազ
խուզի դեպքում ոչխարների բրդի աճման ինտենսիվության
դինամիկան ամրողացնին բխում է միչուրինյան բիոլոգիայի
սկզբունքներից։ Վաղ խուզը գարնան վերջին, ազատելով կենդա-
նու մարմինը բրդի խիտ ծածկոցից, բարենպաստ պայմաններ է
ստեղծում մաշկի մակերեսի ինտենսիվ աերացիայի համար։ Ուլտ-
րամանիշակագույն ճառագայթների առատությունը բարձրա-
գիր լեռնային արոտավայրերում, ինչպես նաև այդ արոտավայ-
րերի վիտամիններով և հեշտ մարսվող սպիտակուցներով հարուստ
կերը նպաստում է արյունատար օրգանների և մաշկը սնող
արյունատար անոթների ակտիվ գործունեությանը, որը նպաս-
տում է մազաթելերի արագ աճմանը։ Կենդանի օրգանիզմը
հատուկ հակասական պայմանների մեջ է գրվում՝
բրդածածկի բացակայությունը և նրա կենսա-
կան անհրաժեշտությունը աշնանային-ձմեռա-
յին ցրտերը վրա հասնելու պահին։ Այս հակա-
սությունը ուժեղացնում է կենդանու ոեակցիան
շրջապատող միջավայրի նկատմամբ և նպաստում
է արտաքին պայմանների ինտենսիվ առիմիլա-
ցիային, նոր բրդածածկը արագորեն աճեցն

լու համար։ Այդ սլրոցեսը հատկապես ակտիվ է ընթանում երկրորդ խռովից հետո։ Լեռնային կլիման ուժեղ կերպով ազդում է ոչխարների օրգանիզմի կառուցվածքի և ֆիզիկական ֆունկցիաների վրա։ Լեռներով ման գալու ուժեղ աշխատանքը զարդացնում է թռքերը, մեծացնում է նրանց ծավալը, որն իր հերթին առաջ է բերում նյութերի ուժեղ փոխանակություն և ներքին օրգանների զարգացում։ Այդպիսով, կենդանուն դնելով արտաքին միջավայրի փոփոխված պայմանների մեջ, մենք հասնում ենք այն բանին, որ նա արտաքին միջավայրը նպատակադիր կերպով ասիմիլացնում է։ Պետք է ենթադրել, որ այդ բարեձեռքերովի հատկությունները հետագա սերունդներում ամրանում են և դառնում ցեղային հատկություններ, այսինքն՝ տեղական և խառնածին ոչխարների ժառանգականություն։

ՏԵՂԱԿԱՆ ՈՉԽԱՐՆԵՐԻ ԲԱԼԲԱՍ ՑԵՂԻ ՄԱՍԻՆ

Հայաստանում բուծվող բոլոր տեղական կոպտաբուրդ ոչխարներից բալբաս ցեղի ոչխարները հանդիսանում են համեմատաբար ամենաարժեքավորները, որովհետև նրանք սպիտակ բուրդ ունեն, մյուս տեղական ցեղերի հետ համեմատած՝ մի քիչ ավելի խուզ (1,6—1,8 կգ), լավ կաթնատվություն (տարեկան մինչև 60—70 լիտր) և ավելի մեծ կենդանի քաշ։ Սակայն բալբասների բուրդը, ինչպես և մյուս տեղական ցեղերինը, նույնպես կոպտիտ և ոչ միատարր է։

Ինչպես նշվեց վերևում, ըստ վերջին ցեղային ռայոնացման, բալբաս ցեղի ոչխարները նույնպես հանձնարարվում են ռեսպուրլիկայի կոլխոզներում զարգացնելու համար։ Բալբասի բուրդը համարյա բացառապես օգտագործվում է գորգագործական արտադրության մեջ և առանց այդ մասին բավականաչափ հիմք ունենալու, որոշ տեղական մասնագետների կողմից համարվում է ամենալավ հումքը արտադրության այդ ճյուղի համար։ Սակայն օրեկտիվությունը պահանջում է ասել, որ բալբաս ցեղի ոչխարի բուրդը գորգերի արտադրության համար բոլորովին էլ ամենալավ հումքը չի հանդիսանում։ Դա նախ և առաջ բացա-

տըրվում է նրանով, որ նա պարունակում է զգալի տոկոս փայլազուրկ աղվամազ, որը դրկում է հայկական գորգերը այն արտահայտիչ փայլից, ինչով աչքի են ընկնում հայտնի տեկինյան գորգերը։ Ոչ ոքի կողմից չի ապացուցված, որ լավ զորգեր պետք է պատրաստել միայն կոպիտ բրդից։ Ինչու չի կարելի պատրաստել ավելի որակյալ, ասենք կիսակոպիտ բրդից։ Որպես այդ բանի լավագույն ապացույց կարող է ծառայել դմակավոր ոչխարների սարաջինյան ցեղի բուրդը (Թուրքմենական ՍՍՌ), որը կարելի է համարել կիսակոպիտ և նույնիսկ կիսանուրբ բուրդ, որովհետև նա մեծ քանակությամբ աղվամազ և բարակ քստամազ է պարունակում, առանց մեռած մազի խառնուրդի։ Հենց այդ բուրդն է, որ հաջողությամբ օդտագործվում է թուրքմենական հայտնի գորգերը գործելու համար։ Ելնելով արդյունաբերական արտադրանքի, այդ թվում նաև գորգերի որակի նկատմամբ եղած աճող պահանջից, պետք է անպայման նպատակահարմար համարել նաև բալբաս ցեղի ոչխարների բրդի որակի բարելավումը և նրա ելույթի ավելացումը։ Դրա համար բավական կլինի բալբաս ցեղի մայրերը մեկ սոնդամ ծածկել նրբագեղմ, կամ կիսանուրբ ցեղի խոյերով։ Դա հնարավորություն կտա արդեն առաջին սերնդում ստանալ կիսակոպիտ բուրդ ունեցող սերունդ, զգալիորեն ավելացնել բրդի ելույթը և միենույն ժամանակ պահպանել բալբաս ցեղի ոչխարի հիմնական տիպը։

Որպես բարելավողներ կարող են հանդիսանալ Ալագյազի սովխոզում ստեղծած նոր ցեղային խմբի արտադրող-խոյերը։ Դա նպատակահարմար է, որովհետև այդ ցեղի մեջ մասնակցում է բալբաս ոչխարի արյունը (այդ ցեղը ստացվել է բալբաս ցեղի մայրերը ուամբուլյեի խոյերի հետ տրամախաչելու միջոցով)։ Ալագյազի սովխոզում կատարած եռամյա փորձերի տվյալներով, այդ ցեղային խմբի խոյերով բալբաս ցեղի մայրերը ծածկելու դեպում առաջին խոկ սերնդում կիսակոպիտ բուրդ է ստացվում, իսկ խուզը ավելանում է $30^{\circ}/_0$ -ով, ընդ որում լիովին պահպանվում է բալբաս ոչխարի տիպը։ Այս տվյալները հիմք են տալիս բալբաս ոչխարների տրամախաչումը համարձակ կերպով իրականացնելու համար։ Կոլխոզների ղեկավարները, կոլխոզնիկներն արդեն համոզվել են, թե ինչպիսի խոշոր առավելություններ ունի նրբագեղմ ոչխարաբուծությունը կոպտարուդի հանդեպ։ Նրանք արդեն հասկացել են տեղական ոչխարների անհիմականությունը առավելությունների և, մասնավորապես,

որեւէ տնտեսական նշանակություն չունեցող ճարպապոչի, «դմակի» առաջ խոնարհվելու ամբողջ պասակարությունը։ Սեփական փորձով նրանք արդեն համոզվում են նրբագեղմ ոչխարաբուծության բարձր եկամտաբերության մեջ։ Բերենք մի երկու օրինակ։ Հայկական ՍՍՌ իջևանի շրջանի կույրիշև գյուղի կոլխոզում եղած ոչխարներից, որոնք հիմնականում խառնածին են և կիսանուրբ ու կիսակողիտ բուրդ են տալիս, 1950 թվականին, միջին հաշվով յուրաքանչյուր ոչխարից ստացել են 2,1 կգ բուրդ։ Այդ բըդի իրացումից (պետությանը հանձնելուց) կոլխոզը 135,7 հազար ոուրլի եկամուտ ստացավ։ Իսկ Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղի կոլխոզի կոպտաբուրդ Հարաբաղի ցեղի ոչխարներից, թեպետ և նույն քանակությամբ բուրդ ստացան, որքան կույրիշև գյուղի կոլխոզում, սակայն կոլխոզի եկամուտը կազմեց ընդամենը 41 հազար ոուրլի, այսինքն՝ մոտ երեք ու կես անգամ պակաս, քան կույրիշև գյուղի կոլխոզում։ Դա բացատրվում է նրանով, որ կիսանուրբ բըդի մթերման գինը երկու և կես—երեք անգամ բարձր է կոպիտ բըդի գնից, իսկ նուրբ բըդի մթերման գինը կոպիտ բըդի գնից բարձր է 4—5 անգամ։

Նուրբ բըդի առավելությունը կոպիտ բըդի նկատմամբ հատկապես ակնառու կերպով երևում է մեկ կիլոգրամ բըդից գործված կտորի ելույթը և նրա արժեքը համեմատելու դեպքում։ Մեկ մետր նրբարուրդ կտոր արտադրելու համար, օրինակ՝ 1492 արտիկուլի, պահանջվում է մոտ 320 գր լվացած բուրդ (այդ գործվածքի մեկ քառակուսի մետրը կշռում է 249 գր)։ Դա նշանակում է, որ 1 կգ լվացած նուրբ բըդից կարելի է պատրաստել երեք մետրից ավելի բարձրորակ բըդյա կտոր։ Նշված արտիկուլի մեկ մետր կտորի շահավետությունը (այսինքն մեծավաճառ գինը, գուրս եկած ինքնարժեքը) կազմում է 244 ո. 46 կոպ.։ Եթե ընդունենք, որ միջին հաշվով մեկ նրբագեղմ ոչխարի խուզը կազմում է—4,5 կգ, իսկ մաքուր (լվացած) բըդի ելույթը 40% , ապա յուրաքանչյուր նրբագեղմ ոչխարի բըդից կստացվի 5,5 մետր նուրբ բըդյա գործվածք, որի շահավետությունը կկազմի 1344 ո. 53 կ.։ Իսկ 1 կգ կոպիտ բըդից ստացվում է ընդամենը 1,2 մետր կոպտաբուրդ գործվածք, այդպիսի գործվածքի մեկ մետրը, օրինակ՝ 1085 արտիկուլի կտորը, կշռում է 760 գր։ Մեկ կոպտաբուրդ ոչխարի խուզը միջին հաշվով չի գերազանցում 1,5 կգ-ից $50—60\%$ մաքուր բըդի ելույթով։ Այդպիսով, մեկ կոպտաբուրդ ոչխարից կարելի է ստանալ 1—1,2 կգ

մաքուր բուրդ, որից հնարավոր է պատրաստել 1—1,2 մետր կոպտաբուրդ գործվածք։ Այդպիսի գործվածքի մեկ մետրի շահավետությունը կկազմի 19 ռ. 28 կոպեկ։ Աճա թե ինչպիսի առավելություն ունի նրբագեղմ ոչխարաբությունը կոպտաբուրդի հանդեպ։ Կոպտաբուրդ ոչխարի հանդեպ զգալի առավելություն ունեն նաև կիսանրբագեղմ ոչխարները։

Կիսակոպտաբուրդ ոչխարը այդ տեսակետից միջանկյալ տեղ է գրավում, բայց ինտերկե մեծ չափով տեղի է տալիս նրբագեղմ և կիսանրբագեղմ ոչխարին։

ՏԵՂԱԿԱՆ ԿՈՊՏԱԲՈՒՐԴ ՈՉԽԱՐԱԲՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հայաստանի բնական սլայմանները և աշխարհագրական դիրքը, առաջին հերթին ընդարձակ բնական արոտների առկայությունը, որոնց զգալի մասը իրենից ներկայացնում է բացարձակ ոչխարային արոտավայրեր, ամուր բազա են հանդիսանում նրբագեղմ և կիսանրբագեղմ արդյունաբերական ոչխարաբության զարգացման համար։

Մոտակա հնգամյակում ոչխարների ցեղային կազմը Հայկական ՍՍՌ կոլխոզներում ու սովխոզներում արմատական վերափոխման է ենթարկվում։

Արդեն 1955 թվականին նրբագեղմ և կիսանրբագեղմ ոչխարների գլխաքանակը կկազմի հոտի ոչ պակաս քան $40-45\%$ -ը ներկայիս $7,5\%$ -ի դիմաց։ Հետագա պրոցեսը կդնա նրբագեղմ ոչխարների գլխաքանակի անընդհատ ավելացման ուղղությամբ, կիսանրբագեղմերի խմբից անցնելու հաշվին, իոկ կիսանրբագեղմ ոչխարների քանակը կաճի ի հաշիվ կիսակոպտաբուրդ ոչխարների։ Ինչ վերաբերում է կոպտաբուրդ ոչխարներին, ապա նրանք կհասցվեն մինիմումի, քանի որ նրանց վերարտադրությունը փաստորեն դադարեցվելու է, եթե չհաշվենք մի քանի տասնյակ հազար գլուխ կարակուլ ցեղի ոչխարները, որոնք պահպանվելու են մի քանի ռայոններում։

Հոտի ստրուկտուրայի այդպիսի արմատական վերակառուցումը զգալիորեն կավելացնի բրդի ելույթը և կբարձրացնի նուրբ և կիսանուրբ բրդերի տեսակարար կշիռը։ Նուրբ բրդի մթերումը 1955 թվականին, 1951 թվականի դիմաց կավելանա համարյա 16

անգամ, կիսանուրբ բրդի մթերումը համարյա 3 անգամ և կիսակոպիտ բրդինը 2,5 անգամ։

Նրբագեղմ և կիսանրբագեղմ ոչխարաբուծության այդպիսի ինտենսիվ զարգացումը այն կդարձնի Հայաստանի գյուղատընտեսության բարձր արդյունավետ ճյուղերից մեկը։

Ոչխարաբուծության զարգացման ընորաշ առանձնահատկությունը, այդ շրջանում, կլինի նրա որակական կազմի անընդհատ բարձրացումը,

Միջնեղային տրամախաչման ճանապարհով նրբագեղմ ոչխարաբուծության արագ զարգացման վերաբերյալ կառավարության դիրեկտիվի կապակցությամբ պետք է նպատակահարմար համարել 1-ին և 2-րդ դասի խառնածին ամորձատված խոյերը հոտի մեջ սլահել երկու-երեք, իսկ անհրաժեշտության դեպքում նույնիսկ չորս-հինգ տարի։ Ներկայումս, ընթացիկ տարվա սերնդի խոյիկները տարվա վերջին մորթվում են կամ մսամթերման են հանձնըվում առանց հաշվի առնելու նրանց բրդային հատկությունները։ Այդ ոչ ճիշտ պրակտիկան անհրաժեշտ է վերանայել, որովհետեւ նա իր հիմքում հակասում է նրբագեղմ ոչխարաբուծության զարգացման առանձնահատկություններին։ Ինչպես հայտնի է, նրբագեղմ ոչխարաբուծության գլխավոր արտադրանքը բուրդն է, իսկ հասուն ամորձատված խոյերը բրդի ամենից ավելի բարձր ելույթն են տալիս։

Այնքան ժամանակ, քանի դեռ երկրում լրիվ բավարարված չի լինի նուրբ և կիսանուրբ բրդի պահանջը, նուրբ և կիսանուրբ բուրդ ունեցող ամորձատված խոյերը պետք է հոտում պահպեն 3—4 տարուց ոչ պակաս։ ՍՍՌՄ նրբագեղմ ոչխարաբուծության պրակտիկայում, նուրբ բուրդ ունեցող ամորձատված խոյերը հոտում պահպում են մինչև 6—7 տարեկան հասակը։ Այդպիսի տնտեսություններում հոտի ստրուկտուրան, մայրական կազմի $45-50\%$ տեսակարար կշռով, տնտեսապես միանգամայն նպատակահարմար է համարվում։

ՍՍՌՄ-ում ստեղծված հայտնի կովկասյան ցեղի հեղինակ Կ. Դ. Ֆիլյանսկին¹, նրբագեղմ ոչխարաբուծության բրդատուղղություն ունեցող տնտեսությունների համար խորհուրդ է

¹ К. Д. Филианский, Организация и техника тонкорунного овцеводства. Сельхозгиз, 1949 г. стр. 254—255.

տալիս հոտի կառուցվածքում հասուն ամորձատված խոյերի տեսակաբար կշիռը հասցնել նույնիսկ մինչև $65,5\%$, իսկ մայրերի տեսակաբար կշիռը թողնել $21,8\%$ մակարդակի վրա։ Մանրամասն տնտեսական անալիզը ցույց է տալիս, որ հոտի այդպիսի կառուցվածքի դեպքում ուժեղ կերպով աճում է բրդի արտադրությունը, բարձրանում է նրա որակը և իջնում է ինքնարժեքը։

Կողտարուրդ ոչխարարության վերափոխումը նրագեղմի և կիսանրբագեղմի, անհետաձգելի խնդիր է, որը կանգնած է անասնաբության ֆրոնտի աշխատողների առաջ։ Այդ պահանջում են երկրի շահերը, ժողովրդական տնտեսության շահերը և ազգարնակչության անընդհատ աճող պահանջները բարձրորակ բրդյա գործվածքների նկատմամբ։

ՆՐԱԳԵՂՄ ՈՉԽԱՐԱԲՈՒԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոտի վերաբարության գործոնները

Հոտի բնական աճի կամ վերաբարության գլխավոր գործոնը հանդիսանում է մայրերի գլխաքանակի հնարավորին չափերկարատե պահպանումը։ Մայրերի մեծ խոտանումը, կամ նրանց մեծ քանակի ծախսումը մսամթերման կամ այլ նպատակների համար, առաջ է բերում հոտի նորոգման չափերի մեծացում և նրա վերաբարության խիստ իջեցում։ Հաշված է, որ, եթե մայրերի հոտի ամեն տարվա նորոգման չափը նորմալ $10-12\%$ -ի փոխարեն հասցվի 25% -ի, ապա հոտի աճը կկրճատվի համարյա երկու անգամ։ Եվ, ընդհակառակը, եթե մայրերի հոտի ամեն տարվա նորոգման չափը 13% -ից կրճատվի և հասցվի մինչև 8% -ի, ապա դա ավելի մեծ էֆեկտ կտա, քան գառների փաստացի ելույթի բարձրացումը 10% -ով։

Առածից, սակայն, բոլորովին էլ չի հետևում, որ գառների փաստացի ելույթի ավելացումը երկրորդական նշանակություն ունի հոտի ընդլայնած վերաբարության համար։ Ընդհակառակը, մայրերի գլխաքանակի մաքսիմալ պահպանման հետ մեկտեղ, հոտի վերաբարության հույժ կարևոր գործոնն է հանդիսանում նաև գառների փաստացի ելույթի ավելացումը։

Եթե 100 մայրերի տարեկան փաստացի ելքն ընդունենք 100 գառ, ապա ելույթը $10^0/0$ կրճատելու դեպքում, այսինքն՝ 100 մորից 90 գառ ստանալու դեպքում, 10 տարում նորմալ խոտանման և նորոգման պայմաններում հոտի ընդհանուր գլխաքանակը կկրճատվի $24^0/0$ -ով. Իսկ գառների փաստացի ելույթը $10^0/0$ -ով ավելացնելու դեպքում, այսինքն, 100 մայրից 110 գառ ստանալու դեպքում, հոտի աճը 10 տարում ոչ միայն չի կը ճառագի, այլ կավելանա $28^0/0$ -ով.

Նրբագեղմ և կիսանրբագեղմ ոչխարների մայրերի գլխաքանակի մաքսիմալ պահպանումը հատկապես անհրաժեշտ է ներկայումս, երբ ոեսպուրլիկայի կոլխոզների ու սովխոզների առաջիր ամրող հասակով կանգնած է կոպտաբուրդ ոչխարաբուծության վերափոխումն ըստ ամենայնի արագացնելու խնդիրը։ Այդ պայմաններում նրբագեղմ կտմ կիսանրբագեղմ այն մայրերի խոտանումը, որոնք ընդունակ են դեռ թեկուզ 1—2 սերունդ տալ, պետք է անթույլատրելի համարել.

Վերջապես հոտի վերաբարպության մեջ ոչ պակաս կարեոր նշանակություն ունի կենդանիների այլ խմբերի՝ շիշակների, խոյերի, ամորձատված խոյերի կորստի մաքսիմալ կրճատումը։

Արհեստական սերմնավորման կազմակերպումը

Մատղաշի բարձր ելույթը պայմանավորվում է զուգավորման և մայրերի արհեստական սերմնավորման հաջող անցկացումով։

Մեր ոեսպուրլիկայի կոլխոզներում ու սովխոզներում ընթացիկ տարում արհեստական սերմնավորմամբ ընդգրկված է ոչխարների մայրերի համարյա ամրող գլխաքանակը։ Այդ կարեորագույն միջոցառումն անցկացնելու որակից է կախված մայրերի ստերջության կրճատումը, որը մինչև այժմ էլ դեռ մեծ տոկոս է կազմում, իսկ դրա հետեւանքով գառների գործնական ելույթը խիստ կրճատվում է։

Մեր ոեսպուրլիկայի կոլխոզներում 100 մայրից միջինը 70—75 գառից ավելի չի ստացվում։

1951թվականին Ղուկասյանի շրջանի կոլխոզներում 100 մայր ոչխարից ընդամենը 67 գառ է ստացվել, Ղափանի շրջանի կոլխոզներում՝ 64 գլուխ, Մեղրու շրջանի կոլխոզներում՝ 74 գլուխ,

Բասարգեչարի շըջանի կոլխոզներում՝ 71 գլուխ։ Ամենաբարձր
ելույթը 100 մայր ոչխարից կազմել է 93 գլուխ (Աշտարակի
շըջանի կոլխոզներում)։ Արտաշատի և Բերիայի անվան շըջանի
կոլխոզները 100 մայր ոչխարից 91-ական գլուխ սերունդ են
ստացել, Խոկռեսպուրլիկայի միջին ելույթը 1951 թվականին 100
մայր ոչխարից կազմել է 74 գլուխ։ 1950 թվականին ավելի պակաս էր՝
70 գլուխ։ Այս թվերը խոսում են այն մասին, որ ոչխարների
ստերջությունը դեռևս բավականին բարձր տոկոս է կազմում,
որը խիստ կերպով կասեցնում է հոտի վերաբադրությունը և
անդրադառնում է ոչխարաբուծության եկամտաբերության վրա։

Բարձր ստերջության պատճառը հանդիսանում է զուգա-
վորման կամպանիայի վատ կազմակերպումը, զոստեխնիկական
անձնակազմի թույլ հսկողությունը սեղմավորման աշխատանք-
ների որակի և նրա արդյունավետության վրա։

Զուգավորման կամպանիայի հաջողությունն ու էֆեկտի-
վությունը համարյա ամբողջովին կախված է մայրական հոտը
զուգավորման սեղոնին լավ նախապատրաստելուց, արտադրող-
ների ընտրությունից և նրանց ոացիոնալ կերակրումից։ Որպես
կանոն իր ժամանակին ցանկության են գալիս և բեղմավորվում
են այն մայրերը, որոնք լավ գիրացած և առողջ են։ Այդ պատ-
ճառով էլ զուգավորման կամպանիան սկսելուց 2.-2,5 ամիս
առաջ, գառները մայրերից կտրելուց և կիթը դադարեցնելուց
հետո, ձևավորվում են մայրերի հոտերը, որոնց համար առանձ-
նացվում են լավագույն արոտավայրեր։ Միջակից ցածր գիրու-
թյուն ունեցող թույլ մայրերին պետք է լրացուցիչ կերակրել
խտացրած կերերով։

Այսպիսով, բարձր բեղմավորման գրավականը հանդիսա-
նում է մայրերի լավ գիրությունը։ Զուգավորումը սկսելու
ժամանակ նրանք պետք է ունենան, այսպես կոչված, բուծարա-
նային գիրություն, այսինքն՝ միջակից բարձր գիրություն։

Դրա համար պետք է կազմակերպել մայրական հոտի արո-
տային բառում։ Արոտային բառան լավ ուժիմի և արածացման
ճիշտ աստիճանական կիրառման գեղքում 35—40 օրում մայ-
րերը միջակից բարձր գիրության են հասնում։ Անհրաժեշտ
դեպքերում գիրությամբ ետ մնացող մայրերին պետք է 15—
20 օրվա ընթացքում լրացուցիչ կերակրել, տալով յուրաքան-
չյուր ոչխարին օրական 200—300 գրամ խտացրած կեր։

Առաջավոր տնտեսությունների փորձերով հաստատվում է,

որ ոչխարների ամենից ավելի բարձր բեղունություն է ստացվում այն ժամանակ, երբ մայրերի գիրությունը սերմնավորման նախապատրաստման ու անցկացման շրջանում անընդհատ բարելավվում է և նրանց կենդանի քաշը ամսական 3—4 կգ ավելանում է։ Հակառակ դեպքում բեղունությունը նկատելի կերպով իջնում է։

Զուգավորմանը լավ նախապատրաստված, միջակից բարձր գիրություն ունեցող մայրերը, ոչ միայն իր ժամանակին ցանկության են գալիս, բարձր բեղմնավորում են ունենում, այլև սաղմնային շրջանում պտուղը նորմալ են աճեցնում, ամրակազմ և առողջ գառներ են տալիս։ Այդպիսի մայրերը կենսակայուն են լինում, բրդային և կաթնային բարձր արդյունավետություն են ունենում։

Բեղմնավորվածության տոկոսը բարձրացնելու գործում մեծ նշանակություն ունի սերմնավորման ժամկետների ընտրությունը։ Ոչխարների մասսայական սերմնավորումը սովորաբար անց են կացնում աշնանը՝ սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին։

Սակայն, նայած այս կամ այն շրջանի, կոլխոզի, սովխոզի կոնկրետ պայմաններին և, մասնավորապես մսուրային շրջանի տեսողությանը, ձմռան ամիսներին ոչխարանոցներով ու կերերով ապահովված լինելուն, այդ ժամկետները ճշտվում են։

Հայաստանի կոլխոզներում սերմնավորումը սովորաբար սկսում են հոկտեմբերի սկզբներին և ավարտում նոյեմբերի երկրորդ կեսին և նույնիսկ վերջին, այն հաշվով, որպեսզի մասսայական ծինը հարմարեցնեն արոտային կերակրմանն անցնելու շրջանի սկզբին։

Ոչխարաբուծական առաջավոր ապրանքային ֆերմաների փորձը ցույց է տալիս, որ լավագույն արդյունք տալիս է վաղ սերմնավորումը—սեպտեմբերի երկրորդ կեսից մինչև հոկտեմբերի վերջը։ Դա հնարավորություն է տալիս մասսայական ծինը հիմնականում ավարտել մարտին, այսինքն մսուրային շրջանի վերջում։

Այսպիսով, գարնանային-ամառային արոտային շրջանին անցնելու սկզբին, ապրիլին—մայիսի սկզբներին, վաղ ծնի գառները արդեն բավականաչափ մեծացած և ամրապնդված են լինում, որպեսզի կարողանան օգտագործել արոտավայրերը, որոնց հյութալի խոտը նրանց համար անփոխարինելի կեր է հանդիսանում։

Հայկական ՍՍՌ Նոր Բայազետի ռայոնի Բատիկ Բատիկ-կյանի անվան կոլխոզի անասնաբուծական ֆերմայի վարիչը ընկ.
Հ. Արգաքանյանը Հայկական ՍՍՌ Անասնաբուծության առաջավորների 1951 թ. ապրիլին հրավիրված հավաքում¹ հայտնեց,
որ ենելով առաջավոր հովիվների փորձից և հաշվի առնելով կոլխոզի կոնկրետ պայմանները, անցյալ տարի ոչխարների արհեստական սերմնավորումը սկսել են սեպտեմբերի 20-ին, սովորաբար ընդունված ժամկետի՝ հոկտեմբերի 10-ի փոխարեն։ Դա հնարավորություն է տվել մասսայական ծինն ընդունել փետըրվարի 20-ից, այսինքն՝ սովորական ժամկետներից 20 օրով շուտ 5000 մայրերից ստացվել էր 4970 գառ, որոնք առ 1 մայիսի 1951 թվականի դրությամբ ամրողությամբ պահպանվել են։ Ընկ.
Հ. Արգաքանյանը նշեց վաղ զուգավորման հետևյալ առավելությունները.

1. Եղանակի պայմանները թույլ են տալիս այդ ժամանակ սերմնավորումն անցկացնել արոտավայրերում։ Սերմնավորման ուշ ժամկետները համընկնում են ցըտերը վրա հասնելու հետ, որի հետևանքով ոչխարները դանդաղորեն են ցանկության գալիս։

2. Վաղ ծինը նաև այն առավելությունն ունի, որ ամոռանոց փոխադրվելու մոմենտին, գառները բավականին ամրապընդված են լինում և լավ են դիմանում վաղ գարնանային ցըտերին։

3. Վաղ սերմնավորման դեպքում հնարավորություն է ստեղծվում ամառային քոչավայրերն անցնելու մոմենտին ավարտել ծնի կամպանիան և խուսափել գառների կորստից անձրևների ու ցըտերի հետևանքով, որ տեղի է ունենում ծինը քոչավայրերում ընդունելու դեպքում։

4. Փորձը ցույց է տալիս, որ վաղ ծնի գառների ըրդի ելույթը ավելի բարձր է լինում, քան ուշ ծնի գառներինը։

5. Վերջապես վաղ ծնի առավելություններից մեկն էլ այն է, որ փետրվարի 20-ից մինչև մարտի 10-ը ծնված շիշակների 40—50%⁰-ը հաջորդ տարի արդեն սերունդ է տալիս։

Առաջավոր կոլխոզների փորձը և զուգական գիտության ժամանակակից նվաճումները մեզ թելադրում են, որ Հա-

¹ Հայկական ՍՍՌ առաջավոր անասնապահների հավաքը. Հայպետհրատ, 1951 թ., Երևան, էջ 33։

յաստանի պայմաններում ոչխարների արհեստական սերմնավորումը պետք է սկսել սեպտեմբերի երկրորդ կեսին և հիմնականում ավարտել նոյեմբերի սկզբին։ Արհեստական սերմնավորման կամպանիայի տևողությունը չպետք է անցնի 35—40 օրից։ Ժամկետները նպատակահարմար է դիֆերենցացնել ըստ ռայոնների խմբերի, ելնելով նրանց զոնայական դասավորությունից, կերապահովվածությունից, կլիմայական պայմաններից և կուլտուրական ռչխարանոցների առկայությունից։

Ենոնային ռայոններում սերմնավորումը պետք է սկսել սեպտեմբերի 20-ին և ավարտել հոկտեմբերի վերջին։ Նախալեռնային ռայոններում համապատասխանորեն՝ հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 5—10-ը, իսկ Արարատյան դաշտավայրի ռայոններում և Կոտայքի, Աշտարակի, Թալինի, Իջևանի ու Նոյեմբերյանի ռայոնների ցածրադիր զոնայի կոլխոզներում նպատակահարմար է արհեստական սերմնավորումը սկսել հոկտեմբերի 5-ին և ավարտել նոյեմբերի 10—15-ին։

Պետք է հասնել այն բանին, որ հոկտեմբերի վերջին արհեստական սերմնավորմամբ ընդգրկված լինի մայրերի գլխաքանակի $85—90^{\circ}/_0$ -ից ոչ պակասը։ Դա հնարավորություն կտա նոյեմբերի ընթացքում կոնտրոլ ստուգում անցկացնել և կրկնակի սերմնավորել այն մայրերը, որոնք այս կամ այն պատճառով մնացել են չբեղմնավորված։ Վաղ զուգավորման հպատակահարմարությունը և էֆեկտիվությունը կարելի է հիմնավորել նաև գիտական դիրքերից։ Դրա համար բավական է ծանոթանալ ռչխարների բեղմնավորման բիոլոգիայի հիմունքների հետ։

Մայր ռչխարների բեղմնավորումը տեղի է ունենալ հասունիդական սեռական տարրերը (ձվաբջիջները) արական սեռական տարրերի (սպերմատոզոիդների) հետ միաձուլվելու հետևանքով, որոնք մոլ սեռական օրգաններում իրենց բեղմնավորման ընդունակությունը պահպանում են 24—36 ժամվա ընթացքում։

Մայր ռչխարների ցանկության դալը ցույց է տալիս, որ նրանց ձվաբանում բեղմնավորման ընդունակ հասուն ձվաբջիջներ կան։ Մայր ռչխարի վիճակը՝ լավ գիրությունը, առողջությունը և արտաքին միջավայրի պայմանները—տարվա ժամանակը, ջերմաստիճանը, լույսի ռեժիմը, վերջապես խնամքնու պահպանումը—պայմանավորում են ցանկության արտահայտման բնույթը։

Հավ գիրացած, առողջ մայրերի մոտ ջերմային օպտիմալ

պայմանների դեպքում, այսինքն, եթե շափից ավելի շոգ չէ և ցուրտ չէ, ցանկությունը արտահայտվում է բուռն և ակտիվ կերպով, որը և վճռական պայման է հանդիսանում զուգավորման էֆեկտիվության համար, այսինքն՝ արական ու իդական սեռական գամետների միաձուլման և սաղմի գոյացման համար:

Օդի շատ բարձր ջերմաստիճանը, ինչպես և ցուրտը, խոնավությունը, երկար լույսային օրը (հունիս, հուլիս, օգոստոս ամիսներին) ճնշող ազդեցություն են թողնում մայրերի սեռական ֆունկցիաների և նրանց մոտ ցանկության արտահայտման վրա, որը խիստ կերպով իջեցնում է բեղմնավորման էֆեկտիվությունը. Դրա հետևանքով սերմնավորված, բայց չբեղմնավորված կենդանիների քանակը, այլ խոսքով ասած ստերջ մնացած մայրերի քանակը, շատ մեծ է լինում. Անեռանդուն և աննկատելի է արտահայտվում ցանկությունը նաև թույլ, վատառողջ և նիհար մայրերի մոտ: Սեռական տարրերի՝ ձվաբջիջների և սեռական հորմոնների որակը, որոնք խթանում են բեղմնավորման պրցեսները, այդպիսի կենդանիների մոտ ցածր է լինում, որը և պայմանավորում է սերմնավորման կամ զուգավորման ժամանակ բեղմնավորման վատ արդյունքը:

Զուգավորման կամպանիայի հաջողության համար չափազանց կարևոր նշանակություն ունի ցանկության եկած մայրերի ժամանակին ընտրությունն ու սերմնավորումը. Ընդումին պետք է նկատի ունենալ, որ ոչխարի մոտ սեռական ցիկլը տևում է սովորաբար 12-ից մինչև 18—20 օր: Եթե բերի գալու օրը բաց է թողնվում, կամ ինչ որ այլ պատճառով սերմնավորումը բեղմնավորություն չի տալիս, ապա մայրերը ընդմիջում կտան, այսինքն՝ երկրորդ անգամ ցանկության կգան միայն 12—20 օրից հետո: Կարող են լինել և այնպիսի դեպքեր, եթե փորձախոյերը սխալմամբ ընտրում են դեռ ցանկության չեկած մայրեր: Այդպիսի մայր ոչխարի սերմնավորումը, իհարկե, անարդյունք կլինի, որովհետև նրանց մոտ սեռական ուղիներում բեղմնավորման համար հասուն ձվաբջիջներ չեն լինի, այդպիսի մայրերը ցանկության կարող են գալ արդեն ոչ թե 12—20 օր հետո, այլ հնարավոր է, որ 1—2 և 6—7 օրից հետո, կամ 9—10 օրից հետո, համենայն դեպքում ավելի շուտ, քան մայր ոչխարի սեռական ցիկլի տևողությունն է:

Այդպիսի ոչխարներ հայտնաբերելու նպատակով անհրաժեշտ է զուգավորումից հետո ստուգում կատարել մայրական

հոտում, որպեսզի հայտնաբերել չըեղմավորված մաքիների ցանկության գալը և ժամանակին նրանց սերմավորել:

Ոչխարաբուծական ապրանքային ֆերմաների վարիչների և հովիվների բրիգադների կողմից արհեստական սերմավորման կամպանիան հաջող անցկացնելու չափանիշը հանդիսանում է հոտերում կրկնակի ցանկության եկող մայրերի մինիմալ քանակությունը:

Առաջավոր տնտեսություններում 600—800 գլուխ ոչխար ունեցող հոտին, սերմավորման Յ-րդից մինչև 14-րդ օրվա ժամանակաշրջանում ընկնում է մեկ օրում ոչ ավելի քան 1—2 կրկնակի բերի եկող մայր։ Դա ցանկության եկած մայրերի ընտրության ճիշտ կազմակերպման լավագույն ցուցանիշ է։

Այս բոլոր տվյալները խոսում են այն մասին, որ զուգավորման բարձր էֆեկտ ստանալու համար անհրաժեշտ է ընտրել սերմավորման լավագույն պայմանները և ամենից ավելի օպտիմալ ժամկետները, որոնք համապատասխանում են ինչպես ոչխարների բեղմավորման բիոլոգիայի օրինաչափություններին, այնպես էլ նրանց պահպանման տնտեսական պայմաններին։

Այդ պայմանների ստեղծելը կխթանի առաջնային բեղունությունը, այսինքն՝ կենդանիների վերաբերության պոտենցիալ ընդունակության ուժեղացումը, հասունացած և բեղմավորման ընդունակ ձվարջիջների քանակի ավելացման և նրանց որակի բարելավման հետևանքով, որն իր հերթին անհրաժեշտ նախադրյալ է հանդիսանում գառների բարձր ելույթ ստանալու և մայրերի ստեղծությունը մաքսիմալ չափով կրճատելու համար։

Արտադրող խոյերի ընտրությունը և նախապատրաստումը
սերմնավորման կամպանիային

Մայրական հոտը արհեստական սերմավորման նախապատրաստելու հետ մեկտեղ անհրաժեշտ է հոգ տանել նաև արտադրողների մասին, որովհետև արտադրող խոյերի սեռական ակտիվությունից և սպերմայի որակից է կախված արհեստական սերմավորման կամպանիայի հաջողությունը։

Նախ և առաջ պետք է ստուգել արտադրողների արդյունավետությունը, առողջությունը և սերմնահեղուկի որակը, ինչպես նաև նրանց սերնդի որակը։ Պետք է առաջին հերթին օգտագործել բարձր արդյունավետություն ունեցող էլիտային խոյերին, որոնք լավագույն սերունդ են տալիս և, մանավանդ, բրդի

բարձր արտադրողականություն ունեն, Մաքսիմալ չափով պետք է օգտագործել այն խոյերին, որոնց սերնդում ավելի շատ զույգեր կան:

Զուգավորման կամպանիային մասնակցելու համար նախորդված արտադրող-խոյերին պետք է առնվազն մեկ—մեկու կես ամիս առաջ ընտրել և պահել ուժեղ կերակրման ու հատուկ խնամքի պայմաններում:

Զոստեխոնիկական գիտությունը անվիճելիորեն ապացուցել է, որ խոյերի սպերմայի որակն ու քանակը անմիջական կախման մեջ է գտնվում կերակրման ու պահելու պայմաններից: Անշուշտ մեծ նշանակություն ունեն նաև կենդանիների ցեղային հատկությունը և անհատական ընդունակությունները: Այդպիսի կենդանիները ավելի շատ են զգում ճիշտ-նորմավորված կերակրման և լավ խնամքի ու պահպանման կարիքը:

Արտադրող խոյերը պետք է միջակից բարձր գիրություն ունենան, բայց չի կարելի թույլ տալ, որ ճարպակալեն, դրա համար պետք է մշտապես նրանց թարմ օդում զրուանքի հանել:

Արտադրողների ռացիոնը կազմվում է այն հաշվով, որպեսզի ապահովվի ոչ միայն նորմալ գիրությունը, այլ ամենից առաջ անհրաժեշտ քանակությամբ առողջ սպերմայի արտադրությունը: Պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր ծածկման ժամանակ խոյը արտադրում է մոտավորապես 1 սմ³ սպերմա, իսկ օրական 3 կամ 4 ծածկման դեպքում, որ տեղի է ունենում արհեստական սերմնավորման կամպանիայի շրջանում, խոյը օրական արտադրում է 12—15 միլիարդ սպերմատոզոֆ, կամ մոտ 4—5 սմ³ սերմնահեղուկ:

Մասսայական արտադրական պայմաններում մեկ խոյի նորմալ բեռնվածությունը պետք է համարել զուգավորման սեզոնում ոչ պակաս 800—1000 մայր, իսկ առաջավոր տնտեսություններում մեկ խոյի նորմալ բեռնվածությունը հասնում է 1500—2000 մայրի: Արտադրող խոյը զուգավորման սեզոնում կարող է շատ ավելի սպերմա տալ, քան պահանջվում է նույնիսկ 1500—2000 մայր բեղմնավորելու համար:

4—5 սմ³ սպերման բավական է 80—100 մայր սերմնավորելու համար, իսկ զուգավորման սեզոնի 35—40 օրվա ընթացքում կարող է սերմնավորել 3500—4000 մայր, որովհետև մաս-

սայական արտադրական փորձերը ցույց են տվել, որ 1 սմ² սպերման բավական է 20 մայր սերմնավորելու համար:

Լիախիժեք կերակրում և պահպանման ճիշտ ռեժիմ ապահովելու դեպքում մեկ խոյի սպերմայով կարելի է սերմնավորել 10.000-ից ավելի մայր: Ասկանիական ցեղի № 2103 հայտնի խոյի սպերմայով 1936 թվականին սերմնավորվել էր 15.016 մայր:

Արտադրող խոյերի կերակրումը

Բազմամյա փորձերից ելնելով, խորհուրդ է տրվում նախապատրաստական և զուգավորման շրջանում հետեւյալ ռացիոնը կիրառել՝ 80—100 կգ կենդանի քաշ և օրական մինչև 4 ծածկում ծանրաբեռնվածություն ունեցող խոյերի համար լավ որակի խոտ 1,5 կգ, վարսակ 0,8—1 կգ, քուսպ 0,2 կգ, թեփ 0,1—0,2 կգ, արյան կամ մսառուկրային ալյուր—0,1 կգ, երեսը քաշած կաթ 2—3 կգ, շաքարասնկեր (դրոժ) չոր 0,1 կգ կամ մամլած 0,2 կգ, դազար կամ սիլոս 0,2—0,5 կգ, 2—3-ական ձու և 10 գր սեղանի աղ:

Այս օրինակելի ռացիոնը կարող է ճշտվել, նայած արտադրողի կենդանի քաշին, բեռնվածությանը, հասակին ու գիրությանը, ինչպես նաև տնտեսությունում այս կամ այն կերերի առկայությանը: Բայց բոլոր դեպքերում էլ ռացիոնի մեջ պետք է ապահովել կերային միավորների, սպիտակուցների և վիտամինների անհրաժեշտ քանակությունը: Այդ զոտեխնիկաների և ֆերմաների վարիչների առաջնակարգ պարտականությունն է:

Ինչպես կենդանիների ախորժակի, այնպես էլ կերերի յուրացման վրա չափազանց բարերար ազդեցություն է թողնում խոտացրած կերերի խմորումը:

Վերջին տարիներին կատարած հետազոտություններով ու դիտողություններով ապացուցված է, որ խոյերի սեռական պոտենցիան ուժեղացնելու համար անհրաժեշտ է ամեն օր նրանց մոտ թողնել լավ արտահայտված ցանկություն ունեցող մի քանի մայրեր, ինչպես նաև ստուգող խոյեր կապված գոգնոցներով: Արտադրողների գրգռվելուց հետո պետք է նրանց ծածկումներ տալ արհեստական վագինայի վրա: Ավելի պակաս ակտիվություն ունեցող խոյերին երբեմն նպատակահարմար է թույլ տալ բնական զուգավորում կատարելու, որից հետո նորից փոխադրել արհեստական վագինայի վրա:

Արտադրողները պետք է պահվեն ընդարձակ, լուսավոր, չոր և մաքուր շենքերում, որոնք պետք է շարունակ օդափոխվեն: Ոչ

պակաս քան ամիսը երկու անգամ, զուգավորման համար նշանակված խոյերը պետք է անասնաբուժական քննության ենթարկվեն։ Տարեկան 2—3 անգամ անհրաժեշտ է նրբագեղմ խոյերի երկարացած կճղակները կտրել, իսկ զուգավորման կամպանիայից առաջ երկարացած կճղակները պետք է կտրել պարտադիր կերպով։

Ոչխարների ձմեռային պահպանումը

Նրբագեղմ ոչխարների պահելու ամենապատասխանառու շրջանը ձմռան—մսուրային շրջանն է, որը Հայաստանի պայմաններում տևում է 5—6 ամիս, իսկ որոշ շրջաններում նույնիսկ 7 ամիս։ Որպեսզի ապահովվի նրբագեղմ ոչխարների բրդի նորմալ աճը, ձմռան շրջանում անհրաժեշտ է նախ և առաջ հոտը ապահովել կերերով և չոր, մաքուր կուլտուրական շենքերով։ Վերևում ասվեց, որ նրբագեղմ ոչխարները և, մանավանդ, նրանց խառնուրդները ավելի կենսակայուն են, ավելի լավ են դիմանում ցրտերին և դաժան պայմաններին, բայց պետք է առանձնապես նշել, որ նրանք շատ վատ են դիմանում խռնավությանը, այդ պատճառով էլ չոր, բարեկարգ ոչխարանոցների տոկայությունը կոլխոզներում և սովխոզներում պարտադիր պայման է հանդիսանում նրբագեղմ ոչխարաբուծության համար։

Նրբագեղմ ոչխարների համար ձմեռային շրջանում, հիմնական կերը հանդիսանում է խոտը։ Դա նրանց համար համարյանփոխարինելի կեր է։ Հոտը ձմռանը ապահովել բարձրորակ մարդագետնային, կամ ցանովի խոտաբույսերի՝ առվույտի, կորընդանի, երեքնուկի խոտով կամ ավելի լավ է նրանց խառնուրդով հացազգի խոտաբույսերի հետ, — նշանակում է ապահովել ոչխարների բրդի նորմալ աճը և մայր ոչխարների հղիության շրջանում պտղի նորմալ զարգացումը։ Դա նշանակում է պահպանել հոտը և սերունդը առանց կորուստների մինչև արոտային շրջանին անցնելը։

Ասածը, սակայն, բոլորովին էլ չի նշանակում, որ նրբագեղմ ոչխարները մյուս կոպիտ կերերը վատ են օգտագործում։ Ընդհակառակը, վերևում նշվեց, որ մերինոս տիպի ոչխարները, մանավանդ հասուն ամորձատված խոյերը, լավ ուտում են նաև կոպտացողուն խոտը և ծղոտը, մանավանդ, եթե այն մանրացված է, վեր է ածված դարմանի և մշակված է կարբիդային շլամով կամ կերային դրոժներով։ Ամորձատված խոյերին օրական կարելի է

տալ մինչև 1 կգ ծղոտ կամ դարման, իսկ մայրերին՝ մինչև 0,5 կգ:

Շատ արժեքավոր կեր է հանդիսանում ձմռան շրջանում սիլոսը. որովհետև մսուրային շրջանում այն միակ հյութալի կերն է. 0,5 կգ լավ որակի սիլոսը նրբագեղմ ոչխարի ձմեռային ռացիոնի մեջ հիանալի կոմպոնենտ է հանդիսանում:

Մայր ոչխարների հղիության երկրորդ շրջանում նրանց ռացիոնի մեջ պետք է ավելացնել $0,2 - 0,3$ կգ խտացրած կերեր՝ դարի, վարսակ, թեփ և հատկապես քուսպ ոչ պակաս քան 100 գրամ:

Շատ մեծ նշանակություն ունի խոտը ժամանակին (մինչև ծաղկումը կամ ծաղկման սկզբին) հավաքելն ու պահպանելը: Ժամանակին չհավաքելու և վատ պահելու դեպքում խոտի սննդային կազմը համարյա երկու անգամ իջնում է. Պրոֆ. Ի. Ս. Պոպովի տվյալներով վատ խոտը պարունակում է ընդամենը $18,9\%$ օսլային համարժեքներ և $2,5\%$ մարսվող սպիտակուց, իսկ ժամանակին հավաքված բարձրորակ խոտը պարունակում է $40,6\%$ օսլային համարժեքներ և $6,5\%$ մարսվող սպիտակուց:

Այդպիսի խոտի $1,5 - 2$ կիլոգրամը իր սննդային արժեքով հավասար է մեկ կիլոգրամ հատիկային կոնցենտրատների, որովհետև հատիկային կերը միջին հաշվով պարունակում է $60 - 75\%$ օսլային համարժեք և $6 - 7\%$ մարսվող սպիտակուց. Այս թվերը մի ավելորդ անգամ հաստատում են լավ խոտի վճռական նշանակությունը ոչխարների պահման ձմեռային շրջանում:

Կերային նորմաները և ռացիոնները նրբագեղմ ոչխարների համար

Ոչխարաբուծության Համամիութենական գիտա-հետազոտական ինստիտուտի կողմից մշակված են հասուն ոչխարների և մատղաշի կերակրման նորմաները մսուրային շրջանում, որոնք արտադրության մեջ լրիվ կերպով իրենց արդարացրել են. Թեպետ և այդ նորմաները կազմված են ռամբուլյե, սովետական մերինոս, ավստրալիական և պրեկոս տիպի նրբագեղմ ցեղերի համար, բայց նրանք որոշ ճշտումներով, հաշվի առնելով կենդանի քաշը և բրդի ելույթը, կարող են կիրառվել նաև տեղական կոպտաբուրդ ոչխարների խառնածինների համար. Ստորև բերում ենք այդ նորմաները.

Բնական խոտհարքների լավորակ խոտի մեկ կիլոգրամը պարունակում է մոտավորապես $0,5$ կգ կերային միավոր և 50 գր

սպիտակուց, իսկ մեկ կգ առվույտի խոտի մեջ սպիտակուցի պարունակությունը հասնում է մինչև 80 գր. Այդպիսով, 1—1,5 կգ խոտը, կամ 1 կգ խոտ + 0,6—0,7 կգ ծղոտ կամ դարման, մեկ օրում բավական է 45—50 կգ կենդանի քաշը ունեցող ոչխարի պահանջը բավարարելու համար հղիության 1-ին կեսում:

Աղյուսակ № 1

Հասակավոր ոչխարների կերակրման նորմաները

Ց Ե Ղ Ե Ր Ը	Կ Ե Ն Գ Ո Ւ Ա Ն Ի Շ Ա Ր Ը	Հ Պ Ի Ո Ւ Թ Յ Ա Ն 1-ին կեսը		Հ Պ Ի Ո Ւ Թ Յ Ա Ն 2-րդ կեսը		Կ Ա Բ Ի Ն Ա Տ Վ Ո Ւ - Թ Յ Ա Ն 1-ին կեսը		Կ Ա Բ Ի Ն Ա Տ Վ Ո Ւ - Թ Յ Ա Ն 2-րդ կեսը	
		Կ Ե Ր Ա Խ Ա Վ Ո Ւ Թ Յ Ա Ն կ ե ր ա խ ա վ ո ւ թ յ ա ն ի կ ե ր ա խ ա վ ո ւ թ յ ա ն ի	Ա պ ի ո ւ թ յ ա ն ի գ ր ա ն ո ւ թ յ ա ն ի	Կ Ե Ր Ա Խ Ա Վ Ո Ւ Թ Յ Ա Ն կ ե ր ա խ ա վ ո ւ թ յ ա ն ի կ ե ր ա խ ա վ ո ւ թ յ ա ն ի	Ա պ ի ո ւ թ յ ա ն ի գ ր ա ն ո ւ թ յ ա ն ի	Կ Ե Ր Ա Խ Ա Վ Ո Ւ Թ Յ Ա Ն կ ե ր ա խ ա վ ո ւ թ յ ա ն ի կ ե ր ա խ ա վ ո ւ թ յ ա ն ի	Ա պ ի ո ւ թ յ ա ն ի գ ր ա ն ո ւ թ յ ա ն ի	Կ Ե Ր Ա Խ Ա Վ Ո Ւ Թ Յ Ա Ն կ ե ր ա խ ա վ ո ւ թ յ ա ն ի կ ե ր ա խ ա վ ո ւ թ յ ա ն ի	Ա պ ի ո ւ թ յ ա ն ի գ ր ա ն ո ւ թ յ ա ն ի
		կ ե ր ա խ ա վ ո ւ թ յ ա ն ի կ ե ր ա խ ա վ ո ւ թ յ ա ն ի	գ ր ա ն ո ւ թ յ ա ն ի գ ր ա ն ո ւ թ յ ա ն ի	կ ե ր ա խ ա վ ո ւ թ յ ա ն ի կ ե ր ա խ ա վ ո ւ թ յ ա ն ի	գ ր ա ն ո ւ թ յ ա ն ի գ ր ա ն ո ւ թ յ ա ն ի	կ ե ր ա խ ա վ ո ւ թ յ ա ն ի կ ե ր ա խ ա վ ո ւ թ յ ա ն ի	գ ր ա ն ո ւ թ յ ա ն ի գ ր ա ն ո ւ թ յ ա ն ի	կ ե ր ա խ ա վ ո ւ թ յ ա ն ի կ ե ր ա խ ա վ ո ւ թ յ ա ն ի	գ ր ա ն ո ւ թ յ ա ն ի գ ր ա ն ո ւ թ յ ա ն ի
Ռամբուլյե	45	0,80	58	0,95	77	1,67	149	1,43	122
Սովետական ժերինոս	50	0,84	60	1,03	80	1,72	154	1,48	125
Պրեկոս	55	0,86	61	1,06	82	1,76	156	1,5?	128
	65	0,88	65	1,10	85	1,85	161	1,67	134
Ավստրա- լիան մե- րինոս	60	0,96	67	1,19	92	1,90	158	1,65	131
	70	0,99	73	1,23	94	1,98	163	1,75	136

Հ Պ Ի Ո Ւ Թ Յ Ա Ն 2-րդ կեսում պետք է կերարաժնին ավելացնել 0,15—0,20 կգ կոնցենտրատ և 0,5 կգ սիլոս:

25—30 կգ կենդանի քաշը ունեցող աճող խառնածին մատուցի պահանջը բավարարելու համար, երբ նրանք կաթից կը տրելուց հետո ձմեռման են անցնում, բավական է օրվա կերարաժնի մեջ մտցնել 1 կգ խոտ (ցանկալի է այդ քանակի կեսը տալ առվույտ, կորնգան կամ երեքնուկ), 0,4 կգ սիլոս և 150—200 գր. կոնցենտրատ՝ որպես լրացուցիչ կեր: 5-ից մինչև 8 ամսական հասակ ունեցող մատղտաների, մանավանդ շիշակների և ցեղական խոյիկների համար այդպիսի լրացուցիչ կերը 90—100 օրվա ընթացքում միանգամայն անհրաժեշտ է երիտասարդ օրգանիզմի նորմալ ձևավորման համար:

Ոչխարների կերակրման ռեժիմը մսուրային շրջանում

Առաջավոր տնտեսությունները կիրառում են կերարաժնի քաշիման հետեւյալ կարգը օրվա ընթացքում.

Առավոտյան ժամը 8—9—ոչխարանոցից դուրս հանելու ժամանակ տրվում է հատիկային կերի առաջին մասը.

Առավոտյան ժամը 9—11—ոչխարանոցից դուրս բերելուց հետո տրվում է խոտի մի մասը:

Յերեկվա ժամը 11—12—տրվում է սիլոսը:

Յերեկվա 12—1—երկրորդ անգամ խոտ է տրվում ջրելուց առաջ և ասլա ջրում են. Զրելուց հետո տրվում է հատիկի երկրորդ մասը: Յերեկվա ժամը 2—4—տրվում է խոտի երրորդ մասը: Երեկոյան ժամը 5—6—տրվում է խոտի կամ ծղոտի մնացած մասը, որից հետո հոտը քշում են ոչխարանոց:

Նայած տնտեսության պայմաններին, կերարաժնի բաշխումը կարելի է կրճատել մինչև 3—4 անգամի:

Պայքար բրդի կորուստների դեմ

Ոչխարաբուծության գլխավոր արտադրանքը և հատկապես՝ նրբագեղմ ոչխարաբուծության, հանդիսանում է բուրդը, այդ պատճառով էլ անհրաժեշտ է մշտական հսկողություն սահմանել բրդի պաշտպանման վրա մինչև այն խուզելը: Ոչխարների գեղմը պետք է պաշտպանել փետրախոտի սերմերով, բուսական աղբով, ավաղով, ցեխով, փոշով կեղտոտվելուց: Այդ նպատակով ձեռք են առնվում նախազգուշական հետեյալ միջոցները.

ա) Կերը, մասնավորապես խոտը, բաժանում են մսուրներում կամ բակում ոչխարների կանգնելու տեղում, նրանց բացակայության ժամանակ:

բ) Թույլ չպետք է տալ ոչխարներին ցանկապատին, տախտակներին քորվել, անցնել թփերի կամ մոլախոտերի միջով:

գ) Թույլ չպետք է տալ ոչխարներին՝ խոտը կամ ծղոտը քաշել դեղերի միջից, վզի և մեջքի բուրդը խոտի մանրութներով կեղտոտելուց խուսափելու համար:

դ) Ոչխարանոցներում որպես ցամքար պետք է օգտագործել ծղոտ:

ե) Ոչխարանոցները պետք է պահել չոր, մաքուր վիճակում: Խոնավությունը նրբագեղմ ոչխարաբուծության պատուհան է: Խոնավ հատակը առաջ է բերում քրտնախաշ և բրդի կորուստ ոչխարների փորի վրա:

զ) Շատ բուրդ է կորչում այն բանի հետեանքով, որ խոյիկները իրենց եղջյուրների սուր ծայրերով մեկը մյուսի վրա-

յից փնջերով պոկում են բուրդը։ Այդպիսի կորուստներից խուսափելու համար անհրաժեշտ է մասուրային շրջանն սկսվելուց առաջ խոյիկների եղջյուրների ծայրերը կտրել մոտավորապես 1 սմ երկարությամբ։

Բրդի զգալի կորուստներ են տեղի ունենում կղկղանքով կեղտոտվելու հետևանքով, մանավանդ գարնանը, արոտի դուրս գալու պահից սկսած։ Այդ ժամանակ նրբագեղմ ոչխարների կը դկրդանքը ջրիկ է դառնում և խիստ կեղտոտում է բուրդը ազդրերի վրա, պոչի շուրջը, ոտքերի վրա, երբեմն փորի տակ։ Այդ կեղտոտած բուրդը համարյա ամբողջությամբ կորչում է։

Այդպիսի կորուստները կանխելու համար անհրաժեշտ է արոտավայր դուրս գալուց 20—30 օր առաջ բրդի նախնական խուզ կատարել ոտքերի, պոչի, զիստերի ներքին մակերեսի վրա, մայրերի կուրծի և խոյերի սեռական օրգանների շուրջը։

Հատկապես զգաստ պետք է լինել ոչխարները քոսով հիվանդանալու նկատմամբ և սիստեմատիկաբար պրոֆիլակտիկ միջոցառումներ անցկացնել։

Թվարկած միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա յուրաքանչյուր ոչխարից մինչև 300—400 գրամ լրացուցիչ բուրդ ստանալ։

Ոչխարների խուզը և խնամքը խուզից հետո

Նրբագեղմ և կիսանրբագեղմ ոչխարներին խուզում են տարեկան միայն մեկ անգամ, սովորաբար մայիսի վերջին-հունիսի սկզբին։ Լեռնային շրջաններում, որտեղ քոչավայրերում հունիսի առաջին կեսը դեռ ցուրտ է լինում, խուզը կարելի է սկսել հունիսի երկրորդ կեսին։

Խուզը կազմակերպված անցկացնելու համար յուրաքանչյուր կոլխոզում պետք է կազմել օրացուցային պլան և կազմակերպական միջոցառումներ, նշելով յուրաքանչյուր հոտի խուզի ժամկետները։

Մայրերի հոտերը ժամանակին խուզելը զոստեխնիկների, հովիվների և կոլխոզների ղեկավարների կարնոր պարտականություններից մեկն է։ Մի տարեկան հասակ ունեցող մատղաշը ցանկալի է խուզել նույնիսկ մայրերի խուզից առաջ, որովհետև մինչև խուզը մատղաշի աճը դանդաղում է։ Առաջին հերթին խուզում են սովորաբար ամորձատված խոյերին և ապա ցեղական արտադրողներին։

Որովհետեւ ներկայումս մեխանիկական խուզը մասսայական չափերով է կատարվում, անհրաժեշտ է ժամանակին նախապատրաստել խուզիչ ագրեգատները և խուզողների կադրերը։ Խուզից հետո առաջին շաբաթվա ընթացքում ոչխարները շատ զգայուն են լինում ցրտի նկատմամբ, մանավանդ, եթե նրանք ընկնում են անձրևի կամ կարկտի տակ։

Մըսելու հիվանդություններից և կորուստներից խուսափելու նպատակով՝ խուզելուց հետո առաջին 6—7 օրը ոչխարները պետք է արածացնել ֆերմային կից մոտիկ արոտավայրերում, որպեսզի եղանակի վատացման դեպքում հնարավոր լինի ժամանակին ոչխարներին քշել ոչխարանոցները կամ այլ ծածկի տակ։

Ոչխարների մըսելը կանխելու միջոցառումները կիրառելուց բացի, պետք է հետեւել նրանց մաշկի վիճակին և կտրվածքները, չանգովածքներն ու այլ մեխանիկական վնասվածքները ժամանակին բուժել։

Բրդի բարձր ելույթ ստանալու գործում մեծ նշանակություն ունի խուզիչ ագրեգատների նորմալ աշխատանքը, խուզողների որակը և ճիշտ դրված հաշվառումը։ Առանձնապես պետք է խուսափել անհավասար խուզումից, որի ժամանակ բուրդը սկզբում խուզվում է մաշկից 2—3 սմ բարձրության վրա, իսկ հետո անմիջապես մաշկի մոտ, որի հետեւանքով մազաթելը բաժանվում է երկու մասի, որպիսի հանգամանքը բրդի խոշոր դեֆեկտ է առաջացնում։

Վերջապես ամենավճռող ուժի՝ կադրերի մասին։ Ինչպես սոցիալիստական տնտեսության բոլոր բնագավառներում, այնպես էլ նրբագեղմ ոչխարաբուծության մեջ գործի հաջողությունը որոշում են կադրերը — կենդանի մարդիկ։

Երկրում նրբագեղմ ոչխարաբուծության զարգացման և բրդի ռեսուրսների ավելացման մասին պարտիայի և կառավարության դիրեկտիվների կատարման համար պայքարում են անասնաբուծության ֆրոնտի հազարավոր աշխատողներ։

Այդ կադրերի աշխատանքի կազմակերպումից, դաստիարակությունից, անասնաբուծության բնագավառում նրանց գիտելիքների սիստեմատիկ բարձրացումից, վերջապես, այդ կադրերի նվիրված աշխատանքից է կախված գործի ամբողջ հաջողությունը։

Հիմնական արտադրական միավորը, հիմնական օղակը ոչխարաբուծության մեջ հանդիսանում է հովիմսերի բրիգադը, իսկ

կենտրոնական դեմքը՝ փորձված, ամենայն մանրութներով իր գործն իմացող ավագ հովիվը, որն իր մի քանի օդնականներով կազմակերպում և անմիջականորեն իրականացնում է մինչև 1000 գլուխ ոչխարի խնամքը, կերակրումը, ծինը, խուզը և վերջապես անկորուստ պահպանումը տարվա ըուլոր եղանակներին:

Դա հսկայական աշխատանք է, որը պահանջում է մեծ փորձ, լուրջ գիտելիքներ, ճկունություն և դիտողունակություն, ձեռներեցություն և համարձակություն: Այդպիսի հանրօգուտ աշխատանքով կարող է հպարտանալ սոցիալիստական գյուղատնտեսության ամեն մի աշխատավոր: Եվ պատահական չէ, որ հովիվների ու ոչխարաբուծության բնագավառի այլ աշխատողների թվից աճել են Սոցիալիստական Աշխատանքի հարյուրավոր Հերոսներ, ՍՍՌՄ շքանշաններով ու մեդալներով պարգևատրվել են հազարվոր մարդիկ:

Նրբագեղմ ոչխարաբուծության ճիշտ կազմակերպման, հոտի կատարելագործման և բրդի մթերատվության բարձրացման մեջ վճռական դերը պատկանում է կոլխոզի, սովխոզի, զոռանասնաբուժական տեղամասի և շրջսովետի գործկոմի գյուղբաժնի զոռտեխնիկին:

Սովետական Միության մեջ հարուստ փորձ է կուտակվել նրբագեղմ ոչխարաբուծության զարգացման բնագավառում, լուրջ հաջողություններ են ձեռք բերվել զոռտեխնիկական գիտության ասպարեզում միջուրինյան բիոլոգիայի լույսի տակ:

Լինել այդ նվաճումների մակարդակի վրա, կարող կերպով ներդնել գիտության ու պրակտիկայի հաջողությունները աշխատանքի իր տեղամասում, կանդ չառնել ձեռք բերածի վրա, այլ անընդհատ հարստացնել ձեռք բերած գիտելիքները և այդ գիտելիքները հաղորդել անասնաբուծության մասսայական կադրերին—անասնաբուծության մասնագետների հայրենասիրական պարտքն է հանդիսանում:

Կոլխոզների վարչությունները, սովխոզների գիրեկտորները, ֆերմաների վարիչները, սկզբնական պարտիական կազմակերպությունները պետք է խրախուսեն լավագույն հովիվներին, առաջավոր մասնագետներին՝ զոռտեխնիկներին, անասնաբուժներին, անասնապահության առաջավորների նվաճումները դարձնելու այդ Փրոնտի բոլոր աշխատողների սեփականությունը: Սոցիալիստական մրցության լայն ծավալումը, նրա հրապարակայնությունը, պատասխանատվության բարձր զգացումը, քըն-

նադատության ու ինքնաքննադատության ծավալումը պետք է
դառնան կոլխոզների ու սովխոզների ղեկավարների ամենօրյա
աշխատանքի ոճը։ Հատուկ ուշադրություն պետք է դարձնել
անասնապահության և հատկապես նրբագեղմ ոչխարաբուծու-
թյան բնագավառի նորանոր կադրեր աճեցնելու և նրանց դաս-
տիարակելու գործին, մշտապես հիշելով ստալինյան իմաստուն
լոգունդը՝ Կադրերը որոշում են ամեն ինչ։




Հրատ. խմբագիր Զ. ԱՍՏՎԱԾԱՑՐՅԱՆ

Կոնտրոլ սրբագրիչ Ա. ԱՐԶԱՔԱՆՅԱՆ **Տեխ. խմբագիր Մ. ԿԱՓԼԱՆՅԱՆ**

**Հանձնված է արտադրության 3/XII 1951թ., ստորագրված է տպագրության
2/11 1952թ., ՎՖ 01949, հրատ. 857, պատվ. 450, տիրած 3000, 4¹/₈ տպագր.
մամուլ, մեկ մամուլում 36000 տպանիշ:**

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տպարան, Երևան, Աբովյան, 124:

ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0008016

~~91623 n.~~

1 p. 95 K.

